

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
Ապահովագրական ՓԲԸ-ի Խորհրդի
«30» հուլիսի 2025թ. որոշմամբ
Խորհրդի Նախագահ՝

Գ.Զաքարյան _____

ստորագրություն

Ուժի մեջ է «01» հոկտեմբերի 2025թ.



«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ»

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

**ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ - 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.....	3
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	5
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ.....	7
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ (ՊԱՏԱՀԱՐՆԵՐ).....	7
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ.....	14
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ (ՀԵՐԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ) ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՐԳՈՎ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....	17
7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ.....	19
8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ.....	22
9. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	24
11. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	30
12. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	34
13. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....	38
14. ՍՈՒՔՐՈԳԱՑԻԱ.....	39
15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.....	39
Հավելված №1.....	40

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Պայմաններում առանձին տերմիններով տրված են հատուկ սահմանումներ, որոնք կիրառելի են միայն սույն Պայմանների շրջանակներում:

1.1. Ապահովագրող՝ «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության (<<) օրենսդրությանը համապատասխան ստեղծված և << տարածքում ոչ կյանքի ապահովագրություն իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձ:

1.2. Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ Պայմանագիր/Վկայագիր կնքած իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպչաիրավական ձևից, կամ անհատ ձեռնարկատեր կամ գործունակ ֆիզիկական անձ:

1.3. Շահառու՝ Ապահովադիր կողմից նշանակված, Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Շահառու կարող է հանդիսանալ այն անձը, ով օրենքի, այլ իրավական ակտի հիման վրա ունի ապահովագրված տրանսպորտային միջոցի և լրացուցիչ սարքավորման պահպանման շահ:

1.4. Ապահովագրական գումար՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար (ապահովագրական պատահարների) տեղի ունենալու պարագայում, Պայմանագրով/Վկայագրով նախատեսված կարգով վճարել ապահովագրական հատուցում:

1.5. Ապահովագրավճար՝ ապահովագրության վճար, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում: Ապահովագրավճարի մասը համարվում է հերթական ապահովագրավճար:

1.6. Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագիր/Վկայագրի հիման վրա Ապահովադիրին (Շահառուին) վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով: Ապահովագրական հատուցման գումարը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը):

1.7. Հատուցման սահմանաչափ՝ Պայմանագիր/Վկայագրի պայմաններով որևէ ապահովագրական ռիսկի կամ ապահովագրության օբյեկտի համար նախատեսված ապահովագրական հատուցման գումարի սահման, որը կիրառվում է ապահովագրված ամբողջ գույքի կամ դրա մի մասի նկատմամբ, մեկ ապահովագրական պատահարի հաշվարկով կամ Պայմանագիր/Վկայագրի ողջ ժամանակահատվածի համար:

1.8. Չհատուցվող գումար (Ֆրանշիզա)՝ Ապահովադիր մասնակցության չափը վնասի հատուցմանը, որը սահմանվում է Պայմանագրով/Վկայագրով՝ կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով:

1.9. Տրանսպորտային միջոց (այսուհետ՝ SU)՝ ընդհանուր երթևեկության ճանապարհներով երթևեկելու համար նախատեսված և սահմանված կարգով << տարածքում գրանցման ենթակա SU:

1.10. Ապահովագրված տրանսպորտային միջոց (այսուհետ՝ Ապահովագրված SU)՝ Պայմանագրով/Վկայագրով նշված (նույնականացված) SU:

1.11. Ապահովագրական ռիսկ՝ ենթադրվող իրադարձություն, որի առաջացման համար կնքվում է Պայմանագիր/Վկայագիր: Որպես ապահովագրական ռիսկ դիտարկվող

իրադարձությունը պետք է ունենա դրա առաջացման հավանականության և պատահականության նշաններ:

1.12. Ապահովագրական պատահար՝ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված իրադարձություն, որը տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադիրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

1.13. Ապահովագրության պայմաններ (Պայմաններ)՝ սույն փաստաթղթում շարադրված ապահովագրության պայմանները, որոնց հիման վրա կնքվում է Պայմանագիրը/Վկայագիրը: Պայմանները հանդիսանում են Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

1.14. Ապահովագրության պայմանագիր (Պայմանագիր/Վկայագիր)՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև գրավոր համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված վճարի դիմաց ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում հատուցել Ապահովադիրին կամ այլ անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը/Վկայագիրը, տվյալ ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրված գույքին պատճառված կամ Ապահովադրի այլ գույքային շահերի հետ կապված վնասը: Պայմանագրի/Վկայագրի դրույթներն ունեն գերակայող ուժ սույն Պայմանների դրույթների նկատմամբ:

1.15. Ապահովագրության դիմում (Դիմում)՝ Ապահովագրողի պահանջով Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների գրավոր հայտնում: Դիմումը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից՝ Ապահովադրի բառերի հիման վրա: Ապահովագրության Դիմումում առկա տեղեկատվության արժանահավատությունը Ապահովադիրը հաստատում է իր ստորագրությամբ: Դիմումը հանդիսանում է Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

1.16. SU լրացուցիչ սարքավորում (այսուհետ՝ LU)՝ SU-ի գործարանային հավաքակազմի մեջ չմտնող սարքավորում, այսինքն՝ սարքավորում, որը տեղադրվել է ոչ SU-ի արտադրման (հավաքման) ժամանակ SU-ը արտադրող գործարանի կողմից, կամ SU-ի զննման հիման վրա Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ ճանաչվել է լրացուցիչ սարքավորում:

1.17. Ապահովադրի (Շահառուի) Ներկայացուցիչ՝ Ապահովադրի (Շահառուի) անունից որոշակի գործողություններ իրականացնելու լիազորություն ունեցող անձ:

1.18. SU վարելու թույլտվություն ունեցող Անձ՝ SU-ը օրինական հիմքով վարող և Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող ֆիզիկական անձ:

1.19. Վարորդ՝ Ապահովագրված SU-ը օրինական հիմքերով վարող և համապատասխան կարգի SU վարելու իրավունք տվող սահմանված նմուշի գործող վարորդական վկայական ունեցող ֆիզիկական անձ (այս սահմանումը օգտագործվում է այն դեպքերում, երբ Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է՝ Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձինք «անսահմանափակ թվով Վարորդներ» պայմանով կնքելու դեպքում): Պայմանների 4.1.5.3

կետի «Մթափ Վարորդ» ռիսկի շրջանակներում Ապահովագրողի կողմից վարորդի տրամադրման դեպքում տվյալ վարորդը լռելյայն համարվում է «վարորդ»:

1.20. Սուբրոգացիա՝Ապահովադրի՝ վնասը պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքի անցումը Ապահովագրողին այն վճարված գումարի չափով, որը հատուցվել է ապահովագրական պատահարի հետևանքով:

1.21. Շահագործման ընթացքում գտնվող SU՝ շարժիչի գործադրմամբ կամ առանց դրա երթևեկության մեջ գտնվող SU, որը չի գտնվում կանգառի, կայանման կամ քարշակման (էվակուացման) մեջ:

1.22. Երթևեկելի մաս՝ ճանապարհի տարր՝ նախատեսված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար:

1.23. Ճանապարհ՝ առնվազն մեկ երթևեկելի մաս ունեցող, իսկ առկայության դեպքում նաև տրամվայի գծեր, մայրեր, կողնակներ և բաժանարար գոտիներ ներառող և օրենսդրությամբ սահմանված կարգով տրանսպորտային միջոցների երթևեկության համար օգտագործվող կահավորված կամ հարմարեցված հողային գոտի կամ արհեստական կառույցի մակերես:

1.24. Ճանապարհի Մերձակա տարածք՝ տրանսպորտային միջոցների միջանցիկ երթևեկության համար (բակեր, կայանատեղեր, փակ տարածքներ, ավտոլիցքավորման կայաններ և այլն) չնախատեսված, ճանապարհին անմիջականորեն սահմանակից պայմանական տարածք:

1.25. Ոչ սթափ վիճակ՝ալկոհոլային խմիչքի, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործմամբ պայմանավորված՝ մարդու ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակ:

1.26. Ճանապարհատրանսպորտային պատահար (ՃՏՊ)՝Ապահովագրված SU-ի՝ ճանապարհով շարժման ընթացքում և դրա մասնակցությամբ առաջացած պատահար, որի հետևանքով զոհվել կամ վիրավորվել են մարդիկ, վնասվել են տրանսպորտային միջոցներ, կառույցներ, բեռներ կամ պատճառվել է այլ նյութական վնաս:

1.27. Անձնական հաշիվ՝ Ապահովագրողի կայքի կամ բջջային հավելվածի փակ բաժին, նախատեսված Համացանցի միջոցով Ապահովադրի հեռեհար մուտքի համար՝ գործողություններ կատարելու նպատակով, այդ թվում՝ սույն Պայմաններով նախատեսված դեպքերում:

1.28. Ապահովագրողի կայք՝ ինտերնետային էջերի բովանդակությունը, տեղադրված ինտերնետ ցանցի համապատասխան հասցեում:

1.29. Բջջային հավելված՝ Ապահովագրողի ծրագրային ապահովում, որը նախատեսված է սմարթֆոնների, պլանշետների և այլ բջջային սարքերի վրա աշխատելու համար

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն Հայաստանի Հանրապետության (<<) Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ Կենտրոնական Բանկի (ԿԲ) կողմից «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ տրված ԱՊՈ թիվ 0010 Լիցենզիայի «Ցամաքային տրանսպորտի ապահովագրության (բացառությամբ երկաթուղային)» դասին:

2.2. ՀՀ օրենսդրության համաձայն և սույն Պայմանների հիման վրա «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն իրավաբանական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի և գործունակ ֆիզիկական անձանց հետ (Կողմեր) կնքում է SU-ի և SU-ի ԼՍ ապահովագրության Պայմանագրեր/Վկայագրեր:

2.3. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագիրը/Վկայագիրը գործում է ՀՀ տարածքում, բացառությամբ զինված հակամարտությունների, պատերազմների, արտակարգ իրավիճակների տարածքների, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

2.4. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում սույն Պայմանների դրույթները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ, եթե այդպիսի փոփոխությունները չեն հակասում ՀՀ գործող օրենսդրությանը: Պայմանագրի/Վկայագրի դրույթների և սույն Պայմանների միջև հակասությունների առկայության դեպքում գերակա ուժ ունեն Պայմանագրի/Վկայագրի դրույթները:

2.5. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրված ՏՄ-ի և ԼՍ-ի վնասման դեպքում, Պայմանագրով/Վկայագրով նշված ապահովագրական ռիսկն ի հայտ գալու դեպքում, հատուցման ենթակա վնաս ասելով հասկացվում է այն վնասը, որը ներառում է Ապահովադրի (Շահառուի) բացառապես այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են վնասված Ապահովագրված ՏՄ-ը և ապահովագրված ԼՍ-ը վերականգնելու այն վիճակով, որում նա գտնվել է ապահովագրական պատահարը (ռիսկը) ի հայտ գալու պահին:

2.6. Ապահովադրի կամ Շահառուի մոտ ապահովագրված գույքի պահպանման շահագրգռվածության բացակայության դեպքում կնքված Պայմանագրի/Վկայագրի անվավեր է:

2.7. Սույն Պայմանների համաձայն Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Շահառուին) ուղարկվող նամակները և ծանուցումները համարվում են պատշաճ կարգով ուղարկված՝ հետևյալ պայմաններից մեկը պահպանելու դեպքում՝

1) ծանուցումը գրավոր տեսքով առձեռն փոխանցվել է Ապահովադրին (Շահառուին) կամ ուղարկվել է պատվիրված նամակ փոստային եղանակով՝ Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովադրի (Շահառուի) հասցեով կամ Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված կոնտակտային տվյալներով այլ փաստաթղթում նշված հասցեով,

2) ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի միջոցով՝ Պայմանագրում/Վկայագրում կամ Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված կոնտակտային տվյալներով այլ փաստաթղթում նշված էլեկտրոնային հասցեին,

3) ծանուցումը ուղարկվել է SMS հաղորդագրության միջոցով՝ Պայմանագրում/Վկայագրում կամ Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված կոնտակտային տվյալներով այլ փաստաթղթում նշված հեռախոսահամարին, կամ էլեկտրոնային նամակի տեսքով՝ բջջային հավելված օգտագործելու միջոցով,

4) ծանուցումը տեղադրվել է Ապահովագրողի կայքի Ապահովադրի անձնական հաշվում, որի մասին Ապահովադիրը տեղեկացվել է էլեկտրոնային նամակով, բջջային հավելված օգտագործմամբ SMS հաղորդագրություն կամ էլեկտրոնային նամակ ուղարկելու միջոցով:

Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված հասցեի, հեռախոսահամարի և/կամ տվյալների փոփոխության դեպքում, Ապահովադիրը (Շահառուն) պարտավորվում է այդ փոփոխության պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ապահովագրողին այդ մասին: Եթե Ապահովագրողը նախապես չի տեղեկացվել Ապահովադրի (Շահառուի) Պայմանագրում/Վկայագրում կամ այլ փաստաթղթում նշված հասցեի, հեռախոսահամարի և/կամ տվյալների փոփոխության մասին, ապա նախորդ հայտնի հասցեով Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները և տեղեկացումները կհամարվեն ստացված նախորդ հասցեով ստացված օրվանից:

2.8. Սույն Պայմանների 1.7. կետով նախատեսված ծանուցումներն Ապահովադրի (Շահառուի) կողմից համարվում են պատշաճ ստացված և վերջիններիս կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները Ապահովագրողի կողմից սկսվում են հաշվարկվել՝

- ծանուցումը գրավոր տեսքով Ապահովադրին (Շահառուին) առձեռն փոխանցելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,

- փոստով պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ հետպատասխան տեղեկացման մեջ նշված ծանուցման ստացման կամ որևէ հիմքով նամակը փոստի ծառայության կողմից հետ վերադարձվելու հաջորդող օրվանից,

- էլեկտրոնային փոստով կամ SMS հաղորդագրության կամ բջջային հավելվածով ծանուցումն ուղարկվելու դեպքում՝ ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից:

2.9. Սույն Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր (պրոդուկտներ):

2.10. Սույն Պայմանների հայերեն և ռուսերեն տեքստերում հակասություններ առաջանալու դեպքում գերակայում է հայերեն տեքստը:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐ

3.1. Ապահովագրության օբյեկտներ են հանդիսանում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովագրի կամ Շահառուի այն գույքային շահերը, որոնք կապված են Ապահովագրված ՏՄ-ի և/կամ ԼՍ-ի վնասվելու, ոչնչացման կամ կորստի հետ:

3.2. Սույն Պայմանների հիման վրա ապահովագրության ենթակա են.

3.2.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված կամ հաշվառման ենթակա, գործող նորմերի և կանոնների պահպանմամբ ՀՀ տարածք ներմուծված, գործող համապատասխան տեխնիկական զննություն ունեցող ՏՄ-ը, որոնք հաշվառված չեն ՀՀ պետական իրավասու մարմինների և Ինտերպոլի տեղեկատվական համակարգերի տվյալներում որպես առևանգված:

Ապահովագրված ՏՄ-ի տեխնիկական վիճակը պետք է համապատասխանի պահանջվող ստանդարտների պահանջներին, տեխնիկական շահագործման կանոններին, արտադրող գործարանի հրահանգներին և այլ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերին:

3.3. ՏՄ-ի ԼՍ-ը: Ապահովագրության ենթակա չէ մոնտաժ չպահանջող ԼՍ-ը:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ (ՊԱՏԱՀԱՐՆԵՐ)

4.1. Սույն Պայմանների համապատասխան կնքված Պայմանագրով/Վկայագրով հնարավոր է հետևյալ ռիսկերի ապահովագրությունը՝

4.1.1. «Վնաս»՝ Ապահովագրված ՏՄ-ի, կամ նրա մասերի վնասումը կամ ոչնչացումը, որը հետևանք է՝

1) ճանապարհատրանսպորտային պատահարի (ՃՏՊ), այդ թվում շարժվող կամ անշարժ առարկաների, օբյեկտների հետ բախման (կառույցների, արգելքների, կենդանիների և այլն),

2) կողաշրջման,

3) հրդեհի, հրդեհի մարման, պայթյունի: Սույն Պայմանների շրջանակներում **հրդեհ** ասելով հասկացվում է անկառավարելի այրումը կամ պայթյունը, որն առաջացել է արտաքին ազդեցության, Ապահովագրված ՏՄ-ի ինքնահրկիզման կամ էլեկտրահաղորդալարերի կարճ միացման հետևանքով,

4) տվյալ տեղանքի համար անսովոր բնության տարերային երևույթների, բացառությամբ երկրաշարժի: Սույն Պայմանների շրջանակներում **տվյալ տեղանքի համար անսովոր բնության տարերային երևույթներ** են համարվում այն երևույթները, որոնք տվյալ տեղանքի համար հատուկ չեն և ՀՀ իրավասու մարմինների կամ օտարերկրյա պետության համապատասխան պատկան (իրավասու) մարմինների (եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության տարածքը ներառում է օտարերկրյա պետության տարածք) կողմից որակվում են որպես անսովոր,

5) Ապահովագրված ՏՄ-ի վրա կողմնակի առարկաների վայր ընկնելու կամ դիպչելու (այդ թվում այլ ՏՄ-ի անիվների տակից մանրախճի կամ քարերի, այլ առարկաների արտանետման),

բացառությամբ Ապահովագրված SU-ի ներկածածկույթին հասցված կետային վնասումը՝ առանց Ապահովագրված SU-ի համապատասխան դետալի (մասի, էլեմենտի) ձևախախտման և/կամ Ապահովագրված SU-ի ապակուն հասցված կետային վնասումը՝ առանց ճաքերի առաջացման,

6) երրորդ անձանց հակաօրինական գործողությունների (ներառյալ Ապահովագրված SU-ի առանձին մասերի, դետալների և ԼՍ գողությունը):

Սույն Պայմանների շրջանակներում **երրորդ անձանց հակաօրինական գործողություններ** ասելով հասկացվում է՝

- Ապահովագրված SU-ի և/կամ ԼՍ-ի միտումնավոր ոչնչացումը կամ վնասումը,
- անգգուշությամբ Ապահովագրված SU-ի և/կամ ԼՍ-ի ոչնչացումը կամ վնասումը,
- Ապահովագրված SU-ի և/կամ ԼՍ-ի նկատմամբ խուլիգանությունը, վանդալիզմը,

7) Ապահովագրված SU-ի սրահից դուրս գտնվող կենդանիների գործողությունների,

8) գրունտի նստվածքի, ճանապարհների կամ կամուրջների փլուզման, ջրի մեջ ընկնելու:

4.1.1.1. Ընդ որում, եթե Պայմանագրով/Վկայագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, «Վնաս» դիսկի գծով ապահովագրական դիսկ/պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝

1) երթևեկության ընթացքում Ապահովագրված SU-ի ճանապարհի Երթևեկելի մասից դուրս գալու (թեկուզ մասնակի) հետևանքով Ապահովագրված SU-ի վնասումը կամ լրիվ ոչնչացումը, անկախ Երթևեկելի մասից դուրս գալու պատճառից, այդ թվում՝ կառավարումը կորցնելու, սահելու, անսարքության, այլ SU-ի, առարկայի կամ կենդանու հետ բախումից խուսափելու կամ այլ պատճառով, բացառությամբ՝ ճանապարհի Երթևեկելի մասում մեկ այլ SU-ի, անշարժ կամ շարժական առարկայի կամ կենդանու հետ բախման պատճառով Ապահովագրված SU-ի Երթևեկելի մասից դուրս գալու հետևանքով Ապահովագրված SU-ին պատճառված վնասը: Սույն կետը չի տարածվում այն պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Ապահովագրված SU-ի ճանապարհի Մերձակա տարածքներում երթևեկության ընթացքում:

Սույն կետի (4.1.1.1. ենթակետ «1»)) համաձայն ճանապարհի Երթևեկելի մաս չեն համարվում ճանապարհի մյուս տարրերը, այդ թվում՝ մայրերը, ճանապարհի եզրաքարերը և բարձրացված անվտանգության կղզյակները, կողնակները, այն է՝ Երթևեկելի մասին հարող, դրանից ծածկույթի տեսակով տարբերվող կամ համապատասխան գծանշումով առանձնացված ճանապարհի տարրը, ինչպես նաև դաշտամիջյան հողածածկ ճանապարհի բանուկ մասին հարող տարածքը,

2) Ապահովագրված SU-ի հանդիպակաց ուղեմասով երթևեկելը կամ հանդիպակաց ուղղությունը բաժանող հոծ գիծը հատելը, կամ փակ և միակողմանի երթևեկության ճանապարհի (ների) նշանների պայմանները խախտելը (հանդիպակաց ուղեմաս, հոծ գիծ և այլ հասկացությունները կարգավորվում են ՃԵԱԱՄ ՀՀ Օրենքով և/կամ ՃԵԿ-ով),

3) Ապահովագրված SU-ի արգելված վայրերում հետընթաց, հետադարձ կամ շրջադարձ կատարելը,

4) Ապահովագրված SU-ի դիմապակուն պատճառված վնասը,

5) Ապահովագրված SU-ի լուսացույցի արգելիչ կամ թարթող ազդանշանի ներքո երթևեկելը կամ երթևեկությունը սկսելը,

6) Ապահովագրված SU-ի արագության գերազանցումը տվյալ երթուղու/ճանապարհի համար սահմանված (թույլատրված) արագությունից ավելի քան 25 (քսանհինգ) տոկոսով,

7) Ապահովագրված SU-ը վարելու հետ միաժամանակ բջջային հեռախոսով, ռադիոկապով կամ համանման այլ կապի միջոցներով խոսելու հետևանքով առաջացած վնասը,

8) Ապահովագրված SU-ի ապրանքային արժեքի կորուստը, շահագործման հետևանքով

բնական մաշվածության վնասները, այդ թվում ներկածածկույթի կետային վնասումը՝ առանց Ապահովագրված SU-ի համապատասխան դետալի (մասի, էլեմենտի) ձևախախտման և/կամ Ապահովագրված SU-ի ապակիներին հասցված կետային վնասումը՝ առանց ճաքերի առաջացման,

9) Ապահովագրված SU-ի սրահի երեսպատման վնասումը ծխախոտով, սուր կտրող առարկաներով և նմանատիպ այլ միջոցներով,

10) Ապահովագրված SU-ի լաքաներկային ծածկույթի վնասումը արտաքին գործոնների (ավազ, աղ, փոքր չափի քարեր, ծառերի կամ թփուտների ճյուղեր, կենդանիների, թռչունների կամ միջատների արտաթորանք, ավտոմեքենայի լվացման և այլն) ազդեցության պատճառով, որը թափքի կամ նրա առանձին դետալի (մասի, էլեմենտի) ձևախախտման և/կամ ապակու ճաքերի առաջացման չի հանգեցրել,

11) Ապահովագրված SU-ի ներքին դետալներին, հանգույցներին և էլեկտրահաղորդալարերին կրծողների կողմից հասցված վնասը,

12) Ապահովագրված SU-ի էլեկտրահաղորդալարերի կարճ միացումը, առանց հրդեհի առաջացման,

13) Ապահովագրված SU-ի մասերի, հանգույցների և/կամ ագրեգատների անսարքությունը, խափանումը, շարքից դուրս գալը դրա շահագործման հետևանքով, այդ թվում ագրեգատների ներքին խոռոչներ օտար առարկաների և իրերի ներթափանցումը (հիդրոհարված և այլն),

14) Ապահովագրված SU-ի համակարգերին, մեխանիզմներին, հանգույցներին հասցված վնասը, որոնց անսարք լինելը հանգեցրել է հրդեհի,

15) SU-ի նույնականացման համարի փոփոխությունը ագրեգատների վրա (շարժիչ, թափք և այլն),

16) Ապահովագրված SU-ի վնասումը, որն առաջացել է Ապահովագրված SU-ի բեռնման, բեռնաթափման և ցանկացած տրանսպորտային միջոցով տեղափոխման ընթացքում, բացառությամբ Ապահովագրված SU-ի քարշակումը ճանապարհային երթևեկության բոլոր կանոնների պահպանմամբ,

17) Ապահովագրված SU-ի վնասումը բեռով՝բեռնման-բեռնաթափման աշխատանքների անցկացման ժամանակ,

18) փոխադրվող առարկաների (բեռի կամ այլ գույքի) տեղափոխման հետևանքով Ապահովագրված SU-ի վնասումը, եթե այդպիսի տեղափոխումը տեղի չի ունեցել ապահովագրական պատահարի հետևանքով,

19) երկրաշարժի հետևանքով Ապահովագրված SU-ին պատճառված վնասը:

4.1.2. «Առևանգում»՝ Ապահովագրված SU-ի կորուստը այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնք ՀՀ Քրեական օրենսգրքի համաձայն որակվում են որպես գողություն, կողոպուտ, ավազակություն, SU-ին ապօրինաբար տիրանալ առանց հափշտակելու նպատակի (փախցնել) և իրականացվել են բացառապես հետևյալ ճանապարհներով՝

1) Ապահովագրված SU-ի գողությունը՝ Ապահովագրված SU-ի ապօրինի, գաղտնի հափշտակությունը՝ առանց Ապահովագրված SU-ի բանալիների կամ գրանցման փաստաթղթերի (Ապահովագրված SU-ի սեփականության վկայական և/կամ Ապահովագրված SU-ի հաշվառման վկայագիր),

2) կողոպուտ՝ Ապահովագրված SU-ի ապօրինի բացահայտ հափշտակությունը,

3) ավազակություն՝ Ապահովագրված SU-ի ապօրինի, բացահայտ հափշտակությունը, որը կատարվել է Ապահովագրի, Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձի կամ Ապահովագրված SU-ի վարորդի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր

բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ Ապահովագրված СУ-ը հափշտակելու նրանց կողմից ցուցաբերած դիմադրությունը ճնշելու նպատակով,

4) Ապահովագրված СУ-ին ապօրինաբար տիրանալը (փախցնելը) առանց հափշտակելու նպատակի՝ առանց Ապահովագրված СУ-ի գրանցման փաստաթղթերի (Ապահովագրված СУ-ի սեփականության վկայական և/կամ Ապահովագրված СУ-ի հաշվառման վկայագիր),

4.1.2.1. Ընդ որում, եթե Պայմանագրով/Վկայագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, «Առևանգում» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ/պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝

1) Ապահովագրված СУ-ի Ապահովագրին չվերադարձնելը՝ Ապահովագրված СУ-ի վարձակալության, վարձույթի, լիզինգի հանձնելու հետևանքով,

2) Ապահովագրված СУ-ի կորուստը, որը որակվում է ՀՀ Քրեական Օրենսգրքով որպես խարդախություն, շորթում, յուրացում:

4.1.3. «Լրացուցիչ սարքավորում»՝ սույն Պայմանների **4.1.1. Error! Reference source not found.** և **4.1.2.** կետերում նախատեսված իրադարձությունների հետևանքով Ապահովագրված СУ-ի վրա տեղադրված ապահովագրված ԼՍ վնասումը, կորուստը, ոչնչացումը:

4.1.3.1. Ընդ որում, եթե Պայմանագրով/Վկայագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ապահովագրական ռիսկեր/պատահարներ չեն համարվում սույն Պայմանների **4.1.1.1** և **4.1.2.1.** կետերով թվարկված իրադարձությունները, ինչպես նաև՝

1) Ապահովագրված СУ-ի ԼՍ-ի ապրանքային արժեքի կորուստը, ապահովագրված ԼՍ շահագործման հետևանքով առաջացած բնական մաշվածությունը,

2) առջևի շարժական պանելով ապահովագրված ավտոմագնիստոլայի կամ առջևի պանելի կորուստը, վնասումը, ոչնչացումը, եթե առջևի պանելը թողնվել է Ապահովագրված СУ-ում:

Եթե СУ-ը ապահովագրված չէ «Վնաս» ռիսկի գծով, ապա սույն Պայմանների **4.1.1.** կետով թվարկված իրադարձությունները «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ապահովագրական ռիսկեր/պատահարներ չեն համարվում:

Եթե СУ-ը ապահովագրված չէ «Առևանգում» ռիսկի գծով, ապա «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով սույն Պայմանների **4.1.2.** կետով թվարկված իրադարձությունները ապահովագրական ռիսկեր/պատահարներ չեն համարվում:

4.2. Ապահովագրական պատահար են համարվում СУ շահագործման հետևանքով դրա առանձին ագրեգատների, համակարգերի, հանգույցների և սարքերի անկանխատեսելի խափանումը, որը թույլ չի տալիս СУ-ին մեկնարկել կամ շարունակել ինքնուրույն ընթացքը՝ անկախ արտադրող/գործարանի կողմից տրամադրված երաշխիքի ժամկետից և առկայությունից, մասնավորապես.

- Անվադողերի վնաս, այս դեպքում կիրառելի է միայն **4.3.1** կետով նշված ծառայությունը:

- Մարտկոցի խափանում (այդ թվում՝ էլեկտրական սնուցման հետևանքով): Այս դեպքում կիրառելի է միայն **4.3.2** կետով նշված ծառայությունը:

- СУ-ի այլ խափանում, որը թույլ չի տալիս СУ-ին մեկնարկել կամ շարունակել ինքնուրույն ընթացքը, և СУ-ն էվակուացնելու կարիք է առաջանում:

- Վարորդի՝ ինքնազգացողության վատթարացումը: Այս դեպքում կիրառելի է միայն **4.3.3** կետով նշված ծառայությունը:

- СУ վառելիքի պակաս: Այս դեպքում կիրառելի է միայն **4.3.4** կետով նշված ծառայությունը:

4.3. Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել ստորև ռիսկերը և ծառայությունները, ինչի մասին հատուկ նշում է կատարվում Վկայագրում.

4.3.1. «Վուլկանացում» - շարժական վուլկանացման ծառայություն/անվադողերի վերանորոգում:

4.3.2. «Էվակուացիա» - մեքենայի գործարկման անհնարինության հետևանքով անհրաժեշտ էվակուատորի ծառայություն, էվակուացիա ծառայությունը հասանելի է ՀՀ մայրաքաղաք Երևանում և հարակից շրջաններում՝ 20 կմ շառավղով

4.3.3. «Սթափ վարորդ» - վարորդի ինքնազգողության վատթարացման պարագայում տրամադրվում է սթափ վարորդի ծառայություն՝ Ապահովադրի կամ Լիազորված վարորդի համար, պայմանով որ ծառայության մատուցման ընթացքում վերջինս ուղեկցելու է «սթափ վարորդին»: Վկայագրում հատուկ նշում է կատարվում, թե քանի անգամ է հասանելի ծառայությունը: Սթափ վարորդ ծառայությունը հասանելի է ՀՀ մայրաքաղաք Երևանում և հարակից շրջաններում՝ 20 կմ շառավղով:

4.3.4. «Վառելիքի առաքում» - առաքվում է այնպիսի չափաքանակի բենզին կամ դիզելառելիք, որը հնարավորություն կտա SU-ն հասցնել մոտակա լիցքավորման կայան:

4.4. Եթե Պայմանագրով/Վկայագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, ապահովագրական ռիսկեր/պատահարներ չեն համարվում՝

4.4.1. բարոյական վնասը, բացթողնված օգուտը, եկամտի կորուստը, հասարակ ու հարկադիր պարապուրդը, այլ անուղղակի և առևտրական կորուստները, Ապահովադրի, Շահառուի և Երրորդ անձանց այնպիսի վնասները և ծախսերը, ինչպիսիք են՝ տուգանքները, Ապահովագրված SU-ի վերանորոգման ժամանակ հյուրանոցում բնակվելը, տրանսպորտային միջոց վարձակալելու ծախսերը, գործուղման ծախսերը, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ժամկետների հետ կապված կորուստները, որոնք առաջացել են ապահովագրական պատահարի հետևանքով,

4.4.2. սույն Պայմանների **4.1.1.** և **4.1.2.** կետերով նախատեսված իրադարձությունները՝ ապահովագրական պատահարի պահին Ապահովագրված SU-ում գտնվող գույքի նկատմամբ,

4.4.3. բեռնատար ավտոմեքենաների, մարդատար ավտոմեքենաների բեռնատար մոդիֆիկացիաների, կաբրիոլետների, կցորդների և կիսակցորդների ապահովագրության դեպքում պարուսինածածկին պատճառված վնասը, ոչնչացումը կամ գողությունը,

4.4.4. սույն Պայմանների **4.1.1.** և **4.1.2.** կետերով նախատեսված իրադարձությունները՝ Ապահովագրված SU-ի գործիքների հավաքածուի, դեղարկղիկի, կրակմարիչի, վթարային կանգառի նշանի, ստացիոնար հակաառևանգման միջոցների նկատմամբ, եթե վերջինս տեղադրված չի եղել արտադրող գործարանի կողմից կամ չի ապահովագրվել որպես լրացուցիչ սարքավորում,

4.4.5. Ապահովագրված SU-ի անվադողերի (այդ թվում նաև պահեստային անվադողի), անվահեծերի, անիվների սկավառակների, ցեխահավաքների, բանալիների, հակաառևանգման համակարգի և դրա հեռակառավարման վահանակի, ապակիների խոզանակների, կողային հայելիների գողությունը,

4.4.6. Ապահովագրված SU-ի ապակիների և/կամ դռների կիսաբաց, բաց, չկողպած թողնելու հետևանքով Ապահովագրված SU-ին պատճառված վնասները կամ գողությունը,

4.4.7. Ապահովագրված SU-ի և դրա մասերի (դետալների) կամ Ապահովագրված SU-ին կցված կցորդի միջև տեղի ունեցած բախման հետևանքով առաջացած վնասը, եթե դա հետևանք չէ այլ SU-ի, կենդանիների կամ առարկաների հետ բախման,

4.4.8. Ապահովագրված SU-ի շահագործման ընթացքում Ապահովագրված SU-ի ներքին մասերին, հանգույցներին և ագրեգատներին, այդ թվում՝ ընթացային և ղեկային, շարժիչի,

փոխանցման տուփին, ինչպես նաև անվադողերին, անվահեծերին և դրանց դեկորատիվ կափարիչներին, Ապահովագրված SU-ն շարժման մեջ դնելու համար ծառայող այլ դետալներին պատճառված վնասը, բացառությամբ այն դեպքերի, երբնույն ապահովագրական պատահարի արդյունքում միաժամանակ վնաս է պատճառվել նաև Ապահովագրված SU-ի թափքին կամ պաշտպանիչ վահաններին,

4.4.9. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Ապահովագրված SU-ով վառելիքի, պայթյունավտանգ կամ հրդեհավտանգ ապրանքների և նյութերի տեղափոխման, բեռնման, բեռնաթափման ընթացքում պայթյունի կամ հրդեհի հետևանքով,

4.4.10. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Ապահովագրի, Շահառուի, Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձի, Ապահովագրված SU-ի Վարորդի, Ապահովագրված SU-ի ուղևորի կանխամտածված գործողությունների արդյունքում ուղղված ապահովագրական պատահարի առաջացմանը, կամ վերը նշված անձանց կողմից հանցագործության կատարման կամ հանցագործություն կատարելու փորձի արդյունքում,

4.4.11. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Ապահովագրի (Շահառուի), Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձի, Ապահովագրված SU-ի Վարորդի, Ապահովագրի իմացությամբ ցանկացած այլ անձի կողմից Ապահովագրված SU-ը լքելու հետևանքով՝ առանց համապատասխան և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու, որոնք բացառում են Ապահովագրված SU-ի ինքնաբերաբար շարժումը կամ դրա օգտագործումը վերոնշյալ անձանց բացակայության ժամանակ,

4.4.12. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Ապահովագրված SU-ը այն անձի կողմից վարելու ժամանակ, ով՝

1) Պայմանագրով/Վկայագրով նշված չէ որպես Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձ,

2) չունի Ապահովագրված SU-ի տեսակի վարելու իրավունք տվող գործող համապատասխան կարգի վարորդական վկայական,

3) սույն Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի համաձայն չի հանդիսանում Ապահովագրված SU-ի Վարորդ,

4) սթափության ստուգումից հետո պարզվել է, որ պատահարի պահին ՀՀ կամ օտարերկրյա պետության գործող օրենսդրության (եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության տարածքը ներառում է օտարերկրյա պետության տարածք) համաձայն գտնվել է ոչ սթափ վիճակում, կամ թմրամիջոցների, տոքսիկ դեղամիջոցների կամ այնպիսի դեղամիջոցների ազդեցության տակ, որոնց ընդունումը հակացուցված է SU-ը վարելու ժամանակ, ինչպես նաև, եթե Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձը կամ, Ապահովագրված SU Վարորդը առանց հիմնավոր պատճառի լքել է կամ թաքնվել է ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության վայրից, կամ հրաժարվել է անցնել սթափության համապատասխան ստուգում կամ բժշկական քննություն (փորձաքննություն),

4.4.13. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել ապահովագրության տարածքից և Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետից դուրս,

4.4.14. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Ապահովագրված SU-ը մրցույթների, փորձությունների, տեսանկարահանումների կամ ուսումնական (վարել սովորեցնելու) նպատակով շահագործելու ժամանակ,

4.4.15. իրադարձությունները, որոնք հանգեցրել են Ապահովագրված SU-ը կորստի (ոչնչացման) կամ վնասման, եթե Ապահովագրի, Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն

ունեցող Անձը կամ Ապահովագրված SU-ի Վարորդը Ապահովագրված SU-ը շահագործել են առևտրային (եկամուտ ստանալու) նպատակով՝ երրորդ անձանց որպես ուղևոր կամ բեռներ տեղափոխելու համար (տաքսի ծառայություն, բեռնափոխադրող ծառայություն և այլն), այդ թվում եթե Ապահովագրված SU-ի վրա առկա են տաքսի կամ բեռնափոխադրող ծառայության ցանկացած նշաններ, պիտակներ, ինքնակաշուններ (այդ թվում gg, Yandex, Utaxi և այլ ցանկացած նշաններ, պիտակներ, ինքնակաշուններ), ազդանշանային լույսեր և/կամ այլ գովազդային նյութեր, որոնք վկայում են Ապահովագրված SU-ը որպես տաքսի կամ բեռնափոխադրող շահագործելու մասին, և մինչև Պայմանագիրը/Վկայագիրը կնքելը կամ Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում մինչև տվյալ իրադարձության ի հայտ գալը Ապահովագրողին չի տեղեկացրել այդ մասին,

4.4.16. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության Ապահովագրված SU-ի լիզինգի, վարձակալության, վարձույթի հանձնելու կամ գրավադրման արդյունքում,

4.4.17. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Ապահովագրի, SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձի կամ Վարորդի կողմից Ապահովագրված SU-ի շահագործման կանոնների խախտման արդյունքում, այդ թվում՝ Ապահովագրված SU-ի շահագործումը ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններով և/կամ Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ Օրենքով կամ օտարերկրյա պետության գործող օրենսդրությամբ (եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության տարածքը ներառում է օտարերկրյա պետության տարածք) արգելված տեխնիկական վիճակում,

4.4.18. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել ոչ գործարանային պայմաններում Ապահովագրված SU-ի վերաձևափոխման հետևանքով, անկախ փոփոխության տեսակից, ինչպես նաև, որոնք տեղի են ունեցել գազաբալոնային սարքավորման տեղադրման կանոնների խախտման հետևանքով,

4.4.19. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ներգործության հետևանքով,

4.4.20. իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների և գործադուլների հետևանքով, պետական մարմինների կարգադրությամբ Ապահովագրված SU-ի բռնագրավման, առգրավման, կալանքի կամ ոչնչացման դեպքում,

4.4.21. շրջակա միջավայրին պատճառված վնասը,

4.4.22. Ապահովագրված SU-ի պետհամարանիշի վնասումը կամ գողությունը,

4.4.23. Ապահովագրված SU-ի գործարանային հավաքակազմի (ըստ Ապահովագրված SU նույնականացման (VIN) կոդի) մեջ չմտնող սարքավորմանը, հանգույցին, դետալին, և/կամ արտաքին ձևավորմանը (tuning) պատճառված վնասը, եթե դրանք ապահովագրված չեն «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով,

4.4.24. Ապահովագրված SU-ի վնասումը՝ ոչ համապատասխան ավտոպահեստամասերի, նյութերի կամ վառելիքի օգտագործման պատճառով,

4.4.25. Ապահովագրված SU-ի վնասված դետալներից բացի Ապահովագրված SU-ի ամբողջական ներկման հետ կապված ծախսերը՝ համապատասխան ներկի բացակայության կամ ցանկացած այլ պատճառով,

4.4.26. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում՝ Ապահովագրված SU-ի փոխարինված արտաքին և ներքին (բացառությամբ արագամաշ՝ իրենց տեխնիկական բնութագրից

ելնելով պարբերաբար փոխարինման ենթակա) մասերին, դետալներին, ագրեգատներին պատճառված վնասները, ինչպես նաև սույն կետով նշված արտաքին մասերի, դետալների, ագրեգատների վնասման հետևանքով Ապահովագրված ՏՄ-ի այլ մասերի, դետալների և ագրեգատների վնասումը, եթե Ապահովադիրը նշված փոխարինված արտաքին և ներքին մասերի, դետալների, ագրեգատների փոխարինման մասին մինչև դրանց վնասվելը Ապահովագրողին գրավոր չի տեղեկացրել:

Պայմանագիրը/Վկայագիրը կարող է կնքվել ինչպես սույն Պայմանների 4-րդ կետում թվարկված բոլոր հնարավոր ապահովագրական ռիսկերից, այնպես էլ մեկ ռիսկից կամ այդ ռիսկերի համադրությամբ:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

5.1. Ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) նշվում է Պայմանագրում/Վկայագրում: Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) չի հանդիսանում Ապահովագրողի և Ապահովադրի միջև Ապահովագրված ՏՄ-ի և ապահովագրված ԼՍ իրական արժեքի (շուկայական արժեք) մասին համաձայնություն:

5.2. Ապահովագրական գումարը յուրաքանչյուր ապահովագրության օբյեկտի և ապահովագրական ռիսկի համար կարող է սահմանվել առանձին:

5.3. ՏՄ-ի և ԼՍ ապահովագրության ժամանակ՝ ապահովագրական գումարները յուրաքանչյուր ռիսկի կամ օբյեկտի համար Պայմանագրում/Վկայագրում նշվում են առանձին:

5.4. «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով Պայմանագրում/Վկայագրում ապահովագրական գումարը յուրաքանչյուր ապահովագրված օբյեկտի համար նշվում է առանձին:

5.5. Պայմանագրում/Վկայագրում յուրաքանչյուր ռիսկի կամ օբյեկտի համար նշված ապահովագրական գումարը այն դրամական գումարն է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է տվյալ օբյեկտի կամ ռիսկի գծով ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վճարել ապահովագրական հատուցում:

5.5.1. Կողմերի համաձայնությամբ Պայմանագիրը/Վկայագիրը կարող է կնքվել «մինչև առաջին ապահովագրական պատահար»-ի պայմաններով, երբ որոշակի ռիսկի գծով ապահովագրական հատուցումը իրականացվում է Ապահովադրի կողմից հայտնած առաջին ի հայտ եկած ապահովագրական պատահարով՝ ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) չգերազանցող չափով: Ապահովագրական փոխհատուցման վճարումը հանդիսանում է Ապահովագրողի պարտականությունների ամբողջ ծավալով կատարում՝ կախված Պայմանագրում/Վկայագրում սահմանված հետևյալ պայմաններից՝

1) որոշակի ռիսկի գծով,

2) Պայմանագրում/Վկայագրով:

5.5.2. Ապահովադրի ընտրությամբ Պայմանագրում/Վկայագրում կարող է սահմանվել ապահովագրական գումար կամ դրա որոշման կարգ՝

1) ապահովագրության ժամկետի համար,

2) Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրության ժամանակահատվածների համար:

5.6. Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրված ՏՄ-ի կամ ապահովագրված ԼՍ իրական արժեքը (շուկայական արժեքը):

5.7. Եթե Պայմանագրում/Վկայագրում Ապահովագրված ՏՄ-ի մասով նշված ապահովագրական գումարը գերազանցել է Ապահովագրված ՏՄ-ի իրական արժեքը, ապա Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է առոչինչ ապահովագրական գումարի այն մասով, որը

գերազանցում է Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրված ՏՄ-ի իրական արժեքը: Այս դեպքում ապահովագրավճարի ավել վճարված մասը վերադարձման ենթակա չէ:

5.8. Եթե, Պայմանագրում/Վկայագրում ապահովագրական գումարները «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով գերազանցել են ապահովագրված ԼՍ իրական արժեքները, ապա Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է առոչինչ ապահովագրական գումարի այն մասով, որը գերազանցում է Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին ապահովագրված ԼՍ իրական արժեքը: Այս դեպքում ապահովագրավճարի ավել վճարված մասը վերադարձման ենթակա չէ:

5.9. Եթե Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրական գումարը ցածր է Ապահովագրված ՏՄ-ի և/կամ ապահովագրված ԼՍ իրական (շուկայական) արժեքից (ոչ լրիվ ապահովագրություն), ապա Ապահովագրողը ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովադիրին (Շահառուին) հատուցում է պատճառված վնասի մի մասը՝ ապահովագրական գումարի նկատմամբ Ապահովագրված ՏՄ-ի և/կամ ապահովագրված ԼՍ իրական արժեքին համամասնորեն, եթե Պայմանագրով/Վկայագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ:

5.10. Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում, Պայմանագիրը/Վկայագիրը կարող է կնքվել նաև «Առաջին ռիսկի» պայմանով, երբ ապահովագրական հատուցումը հաշվարկվում է առանց հաշվի առնելու Ապահովագրված ՏՄ-ի և ապահովագրված ԼՍ իրական (շուկայական) արժեքի ու ապահովագրական գումարի համամասնությունը, այսինքն՝ իրական վնասի չափով, բայց ոչ ավել քան Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) և/կամ Ապահովագրված ՏՄ-ի և/կամ ապահովագրված ԼՍ իրական (շուկայական) արժեքը:

5.11. Ապահովագրական գումարը կարող է լինել ագրեգատային և ոչ ագրեգատային: Եթե Պայմանագրով/Վկայագրով նշված չէ ապահովագրական գումարի տեսակը, ապա ապահովագրական գումարը համարվում է ագրեգատային:

5.11.1. Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված է ագրեգատային ապահովագրական գումար, ապա այն հանդիսանում է գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների հանրագումարով, ընդ որում ապահովագրական գումարը ինքնաշխատ նվազեցվում է հատուցված գումարի չափով:

Ապահովագրական գումարի նվազեցումն իրականացվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվանից՝ Ապահովագրողի կողմից տեղի ունեցածը որպես ապահովագրական պատահար ճանաչելու և հետագայում ապահովագրական հատուցում վճարելու դեպքում:

Ապահովագրական հատուցումը վճարելուց հետո Պայմանագիրը/Վկայագիրը շարունակում է գործել ապահովագրական գումարի և վճարված ապահովագրական հատուցման տարբերության գումարի չափով:

5.11.2. Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված է ոչ ագրեգատային ապահովագրական գումար, ապա այն հանդիսանում է գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետում տեղի ունեցած յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով, ընդ որում, ապահովագրական գումարը չի նվազեցվում վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով:

5.12. Ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) սահմանվում է << դրամով:

Կողմերի համաձայնությամբ ապահովագրական գումարը կարող է սահմանվել նաև արտարժույթով, որի համարժեքը համարվում է ՀՀ դրամով համապատասխան գումարը (այսուհետ՝ «ապահովագրություն արժույթային համարժեքով»):

5.13. Եթե Պայմանագրում/Վկայագրում համապատասխան ռիսկի համար ապահովագրական գումարը սահմանված է արտարժույթի համարժեքով, ապա ապահովագրական պատահարի հայտ գալու դեպքում, կիրառվում է հատուցման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեքը: Եթե համապատասխան արտարժույթի համար ՀՀ ԿԲ փոխարժեքը ապահովագրական հատուցման օրվա դրությամբ 20 % և ավելի բարձր է Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ համապատասխան արտարժույթի փոխարժեքից, ապա ապահովագրական հատուցման հաշվարկը կատարվում է Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ տվյալ արտարժույթի փոխարժեքին ավելացրած 20%:

5.14. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Պայմանագրում/Վկայագրում նշված «Վնաս», «Առևանգում» և «Լրացուցիչ սարքավորում» ռիսկերով ապահովագրական գումարի նկատմամբ կիրառվում են դրա նվազեցման նվազագույնը հետևյալ տոկոսադրույքները՝

- Ապահովագրված ՏՄ-ի և ապահովագրված ԼՍ շահագործման առաջին տարվա համար՝ 20 % (առաջին ամսվա համար՝ 3%, երկրորդ ամսվա համար՝ 2%, երրորդ և հաջորդ ամիսների համար՝ 1,5% յուրաքանչյուր ամսվա համար),

- Ապահովագրված ՏՄ-ին և ապահովագրված ԼՍ շահագործման երկրորդ տարվա համար (թողարկման տարեթիվը մինչև երկու տարվա է)՝ – 15% (1,25% յուրաքանչյուր ամսվա համար),

- Ապահովագրված ՏՄ-ին և ապահովագրված ԼՍ շահագործման երրորդ և հետագա տարիների համար (թողարկման տարեթիվը երկու տարուց ավել է)՝ – 12% (1% յուրաքանչյուր ամսվա համար),

Ընդ որում, Պայմանագրի/Վկայագրի ոչ լրիվ ամիսը հաշվարկվում է որպես լրիվ:

5.15. Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով/Վկայագրով կարող է սահմանվել հատուցման սահմանաչափ, որի տակ հասկացվում է ապահովագրական պատահարով ապահովագրական հատուցման առավելագույն սահմանաչափ՝

- ապահովագրական ռիսկի/օբյեկտի գծով,
- ապահովագրական պատահարի գծով,
- հատուցման ենթակա ծախսերի գծով,
- Կողմերի համաձայնությամբ հատուցման սահմանաչափերի այլ տեսակներ:

5.16. Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել ֆրանշիզայի (չհատուցվող գումարի) հետևյալ տեսակները.

5.16.1. Ոչ պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է Պայմանագրում/Վկայագրում նշված չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել նաև ոչ պայմանական չհատուցվող գումարի հետևյալ տեսակները՝

1) ոչ պայմանական չհատուցվող գումար յուրաքանչյուր պատահարի համար, որը նախատեսում է ապահովագրական հատուցման չափի նվազեցում սահմանված ֆրանշիզայի չափով յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար՝ ապահովագրական հատուցման փաստացի վճարման ենթակա գումարից,

2) ոչ պայմանական չհատուցվող գումար առաջին պատահարի համար, որը նախատեսում է ապահովագրական հատուցման չափի նվազեցում սահմանված ֆրանշիզայի չափով տեղի ունեցած առաջին ապահովագրական պատահարի համար՝ ապահովագրական հատուցման փաստացի վճարման ենթակա գումարից,

3) ոչ պայմանական չհատուցվող գումար երկրորդ պատահարից սկսած, որը նախատեսում է ապահովագրական հատուցման չափի նվազեցում երկրորդ և հաջորդող տեղի ունեցած ապահովագրական յուրաքանչյուր պատահարի համար՝ ապահովագրական հատուցման փաստացի վճարման ենթակա գումարից:

5.16.2. Պայմանական չհատուցվող գումար, որի սահմանման դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասը չի գերազանցում կամ հավասար է Պայմանագրով/Վկայագրով նախատեսված չհատուցվող գումարի չափին, և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե վնասի մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

5.16.3. Պայմանական-ոչ պայմանական չհատուցվող գումար, որը նախատեսում է հատուցման գումարի նվազեցում փաստացի վճարման ենթակա գումարից՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար Պայմանագրով/Վկայագրով սահմանված չհատուցվող գումարի չափով, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է Ապահովագրից, Շահահառուից, Ապահովագրված ՏՄ վարելու թույլտվություն ունեցող Անձից, Ապահովագրված ՏՄ Վարորդից տարբերայլ անձանց մեղավորությամբ, վնաս պատճառող անձը հայտնի է և Ապահովագրի(Շահահառուի) կողմից իրականացվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները Ապահովագրողին վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի համապատասխան իրավունքի անցումը ապահովվելու համար:

5.16.4. Պրոգրեսիվ ոչ պայմանական չհատուցվող գումար, որը նախատեսում է ապահովագրական հատուցման չափի նվազեցում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար Պայմանագրով/Վկայագրով սահմանված ֆրանշիզայի չափով՝ ապահովագրական հատուցման փաստացի վճարման ենթակա գումարից, և ֆրանշիզայի չափը մեծանում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարից հետո:

5.16.5. Պայմանագրով/Վկայագրով կարող է սահմանվել ֆրանշիզայի այլ ձև և տեսակ, ինչպես նաև դրա կիրառման այլ պայմաններ: Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված է ֆրանշիզա և նշված չէ դրա կիրառման պայմանները, ապա համարվում է, որ ֆրանշիզան յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար սահմանված է ոչ պայմանական:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ (ՀԵՐԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ) ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՐԳՈՎ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

6.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է ելնելով ապահովագրական գումարից (հատուցման սահմանաչափից) և Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնից՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտի տեսակը, քանակը, ապահովագրության պայմանները, ապահովագրության ժամկետը և այլ հանգամանքները, որոնք ազդում են ռիսկի աստիճանի վրա:

6.2. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ դրամով կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին անկանխիկ փոխանցման ճանապարհով:

6.3. Ապահովագրավճարի վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

6.4. Արտարժույթային համարժեքով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը կամ դրա հերթական վճարումները հաշվարկման նպատակով կարող են նշվել արտարժույթով:

Ապահովագրավճարի վճարումը իրականացվում է ապահովագրավճարի կամ հերթական վճարման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ փոխարժեքով:

Այն դեպքերում, երբ ՀՀ գործող օրենսդրությամբ թույլատրվում է Պայմանագրի/Վկայագրի Կողմերի միջև հաշվարկներ իրականացնել արտարժույթով, ապահովագրավճարը (հերթական ապահովագրավճարը) կարող է սահմանվել, ինչպես նաև Ապահովադրի կողմից վճարվել արտարժույթով:

6.5. Ապահովագրավճարի (հերթական ապահովագրավճարի) վճարման չափերը և ժամկետները սահմանվում են Պայմանագրով/Վկայագրով:

6.6. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Ապահովագրողի համաձայնությամբ, Ապահովադրին կարող է տրվել ապահովագրավճարը տարաժամկետ կարգով վճարելու հնարավորություն: Հերթական ապահովագրավճարների չափը և դրանց վճարման ժամկետները սահմանվում են Պայմանագրով/Վկայագրով:

6.7. Մեկ տարուց պակաս ժամկետով Պայմանագիր/Վկայագիր կնքելու դեպքում ապահովագրավճարը վճարվում է միանվագ՝ մինչև Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

6.8. Ապահովագրավճարը կամ ապահովագրավճարի առաջին մասը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետներում չվճարելու կամ Պայմանագրով/Վկայագրով սահմանված գումարի չափից քիչ վճարելու դեպքում, Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է ուժի մեջ չմտած, և այդ ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները չեն համարվում ապահովագրական պատահար և Ապահովագրողի մոտ չեն առաջացնում ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

6.9. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից հերթական ապահովագրավճարը չվճարելու դեպքում, Ապահովագրողը չի սահմանում լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, այդ մասին չի ծանուցում Ապահովադրին և միակողմանի լուծում է Պայմանագիրը/Վկայագիրը: Ընդ որում, Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է միակողմանի լուծված՝ Պայմանագրում/Վկայագրում հերթական Ապահովագրավճարի վճարման ամսաթվին հաջորդող օրվա ժամը 00:00-ից, և Ապահովագրողը ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված հերթական ապահովագրավճարի վճարման ամսաթվին հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների համար ապահովագրական հատուցում իրականացնելու պարտականությունից: Սույն կետի համաձայն Պայմանագիրը/Վկայագիրը միակողմանի լուծվում է ինքնաշխատ և Ապահովագրողը Պայմանագրի/Վկայագրի լուծման վերաբերյալ որևէ գրավոր այլ փաստաթուղթ չի կազմում:

6.10. Եթե Պայմանագրով/Վկայագրով նախատեսված է, որ Ապահովագրողը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից հերթական ապահովագրավճարը չվճարելու դեպքում սահմանում է լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար և ծանուցում է այդ մասին Ապահովադրին, ապա Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Շահառուին) ուղարկվող նամակները և ծանուցումները իրականացվում են սույն Պայմանների 2.7. կետի համաձայն:

6.11. Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված է ապահովագրավճարի վճարման տարաժամկետ եղանակ և մինչև Պայմանագրով/Վկայագրով սահմանված հերթական ապահովագրավճարի վճարման ժամկետը Ապահովադիրը հայտնել է ապահովագրական

պատահարի հայտ գալու մասին, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել վաղաժամկետ վճարել ապահովագրավճարի չվճարված մասը կամ հատուցման ենթակա գումարից հաշվանցել վճարման ենթակա ապահովագրավճարն ամբողջությամբ:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Պայմանագիր կնքելու ժամանակ Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով՝

1) լրացնում է Դիմումը և/կամ ապահովագրության օբյեկտի նկարագրությունը Ապահովագրողի կողմից սահմանված ձևով և տրամադրում է լրացված Դիմումը և/կամ նկարագրությունը Ապահովագրողին: Դիմումը և/կամ նկարագրությունը լրացվում է անձամբ Ապահովադրի կամ վերջինիս լիազոր ներկայացուցչի կողմից: Ապահովադրի խնդրանքով, վերջինիս խոսքերի և տրամադրած տեղեկատվության հիման վրա Դիմումը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից: Դիմումի/նկարագրության բոլոր կետերը պետք է լրացվեն ընթերցելի/հասկանալի ձեռագրով՝ բացառելով երկակի մեկնաբանությունը: Դիմումի և/կամ նկարագրության մեջ նշված տեղեկատվության իսկության պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Լրացված Դիմումը և/կամ նկարագրությունը ստորագրվում և հաստատվում է Ապահովադրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից,

2) Ապահովագրողին կամ նրա լիազորված ներկայացուցչին հնարավորություն է տալիս զննել ապահովագրության ընդունվող ՏՄ-ը և ԼՍ-ը:

7.2. Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո Դիմումը և/կամ նկարագրությունը համարվում են Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

7.3. Պայմանագիր/Վկայագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի ստորագրմամբ:

7.4. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Ապահովադիրը պարտավոր է՝

7.4.1. Ապահովագրողին հայտնել Ապահովադրին հայտնի ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը (ապահովագրական ռիսկ) որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին, եթե այդ հանգամանքները հայտնի չեն և չէին կարող հայտնի լինել Ապահովագրողին: Ամեն դեպքում, էական են համարվում Ապահովագրողի կողմից Պայմանագրում/Վկայագրում և/կամ Ապահովադրի գրավոր Դիմումում/նկարագրությունում նշված հանգամանքները:

7.4.2. Ապահովագրողին տրամադրել հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները՝

1) ֆիզիկական անձ Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ), վարորդական վկայականը (առկայության դեպքում), կոնտակտային տվյալները (բջջային հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե),

2) իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը, եթե Ապահովադիրն իրավաբանական անձ է,

3) Ապահովադրի (Շահառուի) ներկայացուցչի լիազորությունների առկայության և ծավալի մասին վկայող լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ,

4) ֆիզիկական անձի գրանցման վկայականը որպես անհատ ձեռնարկատեր, եթե Ապահովադիրը ֆիզիկական անձ է, և Ապահովագրված ՏՄ-ը օգտագործում է գործարար գործունեություն իրականացնելու համար,

5) Ապահովագրության ենթակա ՏՄ-ի փաստաթղթերը (ՏՄ-ի սեփականության իրավունքի վկայականը, ՏՄ-ի հաշվառման վկայագիրը և այլն), ինչպես նաև Ապահովագրողի պահանջով ՏՄ-ին վերաբերող այլ փաստաթղթեր (ՏՄ-ի մաքսային փաստաթղթերը, առք ու վաճառքի

պայմանագիրը կամ SU-ի ձեռքբերման փաստը հավաստող հաշիվ-ապրանքագիրը և այլն): Եթե Ապահովադիրը չի հանդիսանում Ապահովագրված SU-ի սեփականատեր, ապա Ապահովադիրը սույն կետում նշված փաստաթղթերից բացի, պարտավոր է ներկայացնել SU-ի տնօրինման/տիրապետման իրավունքը հաստատող փաստաթղթեր,

6) վարկային պայմանագիրը, գրավադրման պայմանագիրը (եթե SU-ը ձեռք է բերվել վարկով և/կամ գրավադրված պարտավորություններով),

7) SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձանց վարորդական իրավունքի վկայականները և անձը հաստատող փաստաթղթերը, եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձանց ցանկի պայմաններով,

8) այլ տեղեկություններ, որոնք ներառված են Դիմումում և/կամ նկարագրությունում և/կամ Պայմանագրում/Վկայագրում:

Ապահովագրողն իրավունք ունի իր հայեցողությամբ կրճատել կամ ընդլայնել ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

7.4.3. SU-ը ներկայացնել Ապահովագրողին՝ զննման և լուսանկարման համար: Դիմումի և/կամ նկարագրության մեջ լրացվում է զննման արդյունքում հայտնաբերված վնասները: Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում SU-ի այն վնասների համար, որոնք առկա են Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին:

7.5. Պայմանագրում/Վկայագրում նշվում են Ապահովագրված SU վարելու թույլտվություն ունեցող Անձինք, նրանց սեռը, ծննդյան ամսաթիվը, վարորդական փորձը՝ նշելով փորձի սկզբի ամսաթիվը (առաջին վարորդական իրավունքի վկայականի ստացման ամսաթիվը), բացառությամբ «Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձինք՝ անսահմանափակ թվով Վարորդներ» պայմանով Պայմանագրի /Վկայագրի կնքման դեպքում:

7.6. Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ Պայմանագրում/Վկայագրում կարող են սահմանվել Ապահովագրված SU-ի պահպանման կոնկրետ պայմաններ գիշերային ժամերին, ինչպես նաև տեղադրված և միացված հակաառևանգման համակարգի առկայության պահանջ:

7.7. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Պայմանագրի/Վկայագրի կորստի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողն Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա Ապահովադրին տրամադրում է Պայմանագրի/Վկայագրի կրկնօրինակը: Կրկնօրինակը տրամադրելուց հետո կորած Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է անվավեր և դրա հետ կապված որևէ հատուցում չի կատարվում:

7.8. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, եթե դրանում այլ բան նախատեսված չէ:

7.9. Պայմանագիրը/Վկայագիրը, եթե դրանում այլ բան նախատեսված չէ, ուժի մեջ է մտնում՝

1) ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի կանխիկ վճարման դեպքում ապահովագրավճարի վճարման հաջորդող օրվա ժամը 00:00-ին, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության ժամկետի սկզբի օրվա 00:00-ից: Ընդ որում, վճարման օր է համարվում ապահովագրավճարի ստացականի վրա նշված ամսաթիվը,

2) ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի բանկի հաշվարկային հաշվին փոխանցելու նպատակով Ապահովադրի հաշվարկային հաշվից դուրս գրման օրվա հաջորդող օրվա ժամը 00:00-ին, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության ժամկետի սկզբի օրվա 00:00-ից:

7.10. Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ Պայմանագրում/Վկայագրում մեկ կամ մի քանի ռիսկերի/օբյեկտների գծով կարող է սահմանվել Պայմանագրի/Վկայագրի գործողության սկզբի այլ պահ:

7.11. Պայմանագիրը/Վկայագիրը ավարտվում է Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության ժամկետի ավարտի օրվա տեղական ժամանակով ժամը 23:59 թոպեին:

7.12. Ապահովագրությունը տարածվում է այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

7.13. Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիր/Վկայագիր կնքելիս, Ապահովադիրը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ապահովագրողը Պայմանագրի/Վկայագրի գործողության ողջ ընթացքում և դրա ավարտից հետո 10 (տասը) տարվա ընթացքում իրավունք ունի մշակել Պայմանագրում/Վկայագրում նշված ֆիզիկական անձանց անձնական տվյալները՝ Պայմանագրի/Վկայագրի կատարման, վիճակագրական և վերլուծական, ինչպես նաև ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման նպատակներով:

Ապահովադիրը կրում է անձնական պատասխանատվություն՝ երրորդ անձանց անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրամադրելու համար: Ընդ որում, կնքելով Պայմանագիր/Վկայագիր, Ապահովադիրը հաստատում է, որ պատշաճ կարգով լիազորված է անձնական տվյալների սուբյեկտների (երրորդ անձանց) կողմից՝ իրենց անձնական տվյալները Ապահովագրողին փոխանցելու համար: Սույն պարբերության դրույթները կիրառելի են անկախ սույն Պայմաններով նախատեսված Պայմանագրի/Վկայագրի կնքման եղանակից:

Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիր/Վկայագիր կնքելիս, Ապահովադիրը տալիս է նաև իր համաձայնությունը Ապահովագրողի այլ ապահովագրատեսակների (պրոդուկտների) և ծառայությունների, ինչպես նաև Ապահովագրողի հետ Պայմանագրի/Վկայագրի վերականգնման պայմանների տեղեկացման համար:

Վերը նշված նպատակներն իրականացնելու համար Ապահովագրողը իրավունք ունի Պայմանագրի/Վկայագրի կնքման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց, ում հետ Ապահովագրողն ունի կնքված համապատասխան պայմանագիր/համաձայնագիր, որն ապահովում է անձնական տվյալների հուսալի պաշտպանությունը և անօրինական բացահայտման կանխումը:

Ապահովագրողը պարտավորվում է սույն կետով նշված նպատակներից բացի այլ նպատակներով ապահովել Ապահովադրի անձնական տվյալների պահպանությունը և գաղտնիությունը:

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը կարող է հետ կանչվել անձնական տվյալների սուբյեկտի կողմից ամբողջությամբ կամ այլ ապահովագրատեսակների (պրոդուկտների) կամ ծառայությունների մասով տեղեկացման մասով մասնակի՝ ուղարկելով Ապահովագրողին գրավոր դիմում այնպիսի միջոցով, որից հնարավոր կլինի հստակ որոշել նշված դիմումի Ապահովագրողի կողմից ստանալու ամսաթիվը:

Անձնական տվյալների սուբյեկտի կողմից անձնական տվյալների համաձայնության հետ կանչման դեպքում Ապահովագրողը շարունակում է մշակել անձնական տվյալները միայն Պայմանագրով/Վկայագրով պարտականությունների կատարման համար:

Ապահովադիրը տալիս է նաև իր համաձայնությունը Ապահովագրողին ՀՀ գործող օրենսդրության համաձայն ստանալ տեղեկատվություն Ապահովադրի վարկային պատմության վերաբերյալ: Նշված համաձայնությունը Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրվում է

Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին (ամսաթվից)՝ Պայմանագրում/Վկայագրում նշված տվյալների և տեղեկատվության ստուգման, և Ապահովագրի վերաբերյալ այլ տեղեկատվության ստացման համար:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

8.1. Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է հետևյալ դեպքերում.

8.1.1. Պայմանագրում/Վկայագրում սահմանված գործողության ժամկետը լրանալու,

8.1.2. Ապահովագրողի կողմից Պայմանագրով/Վկայագրով ստանձնած իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու (ապահովագրական հատուցման վճարումը ապահովագրական գումարի չափով),

8.1.3. Ապահովագրի կողմից Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով հերթական ապահովագրավճարը չվճարելու, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

8.1.4. դատարանի կողմից Պայմանագրի/Վկայագրի անվավեր ճանաչելու որոշում ընդունելու,

8.1.5. ՀՀ գործող օրենսդրության համաձայն Ապահովագրողի լուծարման,

8.1.6. անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ Ապահովագրի մահվան, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր Ապահովագրի լուծարման,

8.1.7. Ապահովագրի (Շահառուի) կողմից Ապահովագրված ՏՄ օտարման,

8.1.8. Կողմերի համաձայնությամբ,

8.1.9. ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

8.2. Պայմանագիրը/Վկայագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Ապահովագրողի պահանջով ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դեպքերում և կարգով:

8.3. Ֆիզիկական անձ Ապահովագիրն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը/Վկայագիրը դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ Ապահովագրի կողմից Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին Ապահովագրողին ծանուցելու օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից: Ապահովագիրը դիմումի հետ պետք է ներկայացնի Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը և ապահովագրավճարի վճարման անդորրագրի բնօրինակը: Նշված փաստաթղթերի բացակայության դեպքում Ապահովագիրն անձամբ դիմումում նշում է դրանց չներկայացման պատճառները: Նշված փաստաթղթերը չներկայացնելը հիմք չի հանդիսանում Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման մերժման համար:

8.3.1. Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

1) Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,

2) կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ Ապահովագիրը դիմել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:

- Ֆիզիկական անձ Ապահովագրի կողմից Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվանից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու դիմում ներկայացնելու դեպքում՝ ապահովագրավճարն ամբողջությամբ վերադարձվում է Ապահովագրին, եթե Ապահովագիրը հրաժարվել է Պայմանագրից/Վկայագրից մինչև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի սկզբի ամսաթիվը,

- ապահովագրավճարը վերադարձման ենթակա է մասնակի՝ հաշվարկված Պայմանագրի/Վկայագրի չլրացած ժամկետին (օրերով) համամասնորեն՝ մասհանելով

Ապահովագրողի գործառնական ծախսերը (ապահովագրավճարի 35%-ը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ), եթե Ապահովադիրը հրաժարվել է Պայմանագրից/Վկայագրից՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի սկզբի ամսաթվից հետո:

Պայմանագրի/Վկայագրի գործողությունը համարվում է դադարած Ապահովագրողի կողմից Ապահովադիրի Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու գրավոր դիմումը ստանալու ամսաթվի կամ Կողմերի համաձայնությամբ այլ ամսաթվի ժամը 00:00-ից, բայց ոչ ուշ, քան սույն կետի առաջին պարբերությամբ նշված ժամկետից:

Ապահովագրավճարի (ապահովագրավճարի մի մասի) վերադարձը իրականացվում է Ապահովադիրի Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու դիմումը ներակայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

8.3.2. Ֆիզիկական անձ Ապահովադիրին իրավունք չունի պահանջելու ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար հետևյալ պայմանների միաժամանակ առկայության դեպքում.

1) մտածելու ժամանակի ընթացքում Ապահովադիրը չի ծանուցել Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին,

2) եթե այդ ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ Ապահովադիրը մինչև մտածելու ժամանակի ավարտը ծանուցել է Ապահովագրողին Պայմանագրի/Վկայագրի լուծելու մասին:

8.4. Եթե Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ դադարում է ապահովագրական պատահարից տարբերվող այլ հանգամանքների բերումով ապահովագրական պատահար ի հայտ գալու հնարավորության վերանալու կապակցությամբ, Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի մի մասի նկատմամբ՝ համամասնորեն այն ժամանակին, որի ընթացքում գործել է ապահովագրությունը:

Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրավճարի ետ վերադարձման ենթակա մասը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$VU = \frac{(U - 35\% * U) * n}{N} - <,$$

VU՝ վերադարձման ենթակա ապահովագրավճարի մաս,

U՝ Պայմանագրով/Վկայագրով փաստացի վճարված ապահովագրավճար,

35% * U՝ Ապահովագրողի ծախսեր,

n՝ Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման ամսաթվից մինչև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտի օրերի քանակ,

<՝ վճարված և վճարման ենթակա ապահովագրական հատուցումներ,

N՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետը՝ օրերով (ժամանակահատված, որի համար կնքվել է Պայմանագրի/Վկայագրի):

Եթե Պայմանագրի/Վկայագրի դադարեցման ամսաթվի դրությամբ առկա է հայտարարված և չկարգավորված ապահովագրական պատահար, ապա ապահովագրավճարի հաշվարկը և ետ վերադարձը կատարվում է ապահովագրական պատահարը կարգավորելուց հետո:

8.5. Սույն Պայմանների **8.3.** և **8.4.** կետերում թվարկված հիմքերից տարբերվող հիմքերով Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում ապահովագրավճարը (այդ թվում

նաև ապահովագրավճարի մասը) ենթակա չէ վերադարձման, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

8.6. Պայմանագրի/Վկայագրի լուծման դեպքում, վերադարձման ենթակա ապահովագրավճարը կամ դրա մի մասը, կարող է ուղղվել Ապահովադրի Ապահովագրողի հետ այլ ապահովագրության պայմանագրի/վկայագրի ապահովագրավճարի վճարմանը:

8.7. Մեկ կամ մի քանի ռիսկերի/օբյեկտների գծով Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են նախատեսվել Պայմանագրի/Վկայագրի դադարեցման այլ հիմքեր:

9. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

9.1. Ապահովադիրը պարտավոր է Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրողին գրավոր տեղեկացնել տվյալ օբյեկտի գծով այլ ապահովագրական ընկերությունների հետ կնքված ապահովագրության այն պայմանագրերի/վկայագրերի մասին, որոնք գործելու են Պայմանագրի/Վկայագրի հետ միաժամանակ, ինչպես նաև, անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրի/Վկայագրի կնքումից հետո կնքվելիք ապահովագրության նույնօրինակ պայմանագրերի մասին: Տվյալ ծանուցման մեջ պետք է նշված լինի ապահովագրական ընկերության անվանումը, այդ ապահովագրական ընկերության հետ կնքված ապահովագրության պայմանագրի համարը, պայմանագրի գործողության ժամկետը, ապահովագրված ռիսկերը, ապահովագրական գումարը և չհատուցվող գումարը (ֆրանշիզան):

10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՇԱՀԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

10.1. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություն ի հայտ գալու ժամանակ, Ապահովադիրը (Շահառուն), կամ նրա Ներկայացուցիչը, կամ Ապահովագրված ՏՄ վարելու լիազորություն ունեցող Անձը, կամ Ապահովագրված ՏՄ-ի Վարորդը պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր ողջամիտ և մատչելի միջոցները Ապահովագրված ՏՄ-ի և դրանում գտնվող անձանց փրկելու համար, Ապահովագրված ՏՄ-ի հետագա վնասների կանխարգելման և լրացուցիչ վնասի առաջացմանը նպաստող պատճառների վերացման ուղղությամբ:

10.2. Ապահովագրված ՏՄ-ի վնասման, ապահովագրված ԼՍ վնասման, ոչնչացման («Վնաս» և «Լրացուցիչ սարքավորում» ռիսկեր) ժամանակ Ապահովադիրը պարտավոր է՝

1) չտեղաշարժել Ապահովագրված ՏՄ-ը՝ պահպանելով տեղի ունեցած վթարի բոլոր վթարային հետքերը, բացառությամբ երբ վթարված ՏՄ-ի տեղաշարժումը թույլատրվում է Ապահովագրողի կողմից, կամ, եթե դա պահանջում են պետական իրավասու մարմինները,

10.2.1. ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություն ի հայտ գալուց հետո չլքել, չհեռանալ պատահարի վայրից, մինչև Ապահովագրողի ներկայացուցչի և իրավասու մարմիններին ժամանումը, եթե ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության ի հայտ գալուց դեպքում պահանջվում է դիմել իրավասու մարմիններին,

10.2.2. անհապաղ, բայց ոչ ուշ քան ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու պահից 40 րոպեի ընթացքում, տեղեկացնել Ապահովագրողին տեղի ունեցած պատահարի մասին՝ զանգահարելով Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրողի շուրջօրյա հեռախոսահամարով: Նշված պարտավորությունից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը, Ապահովագրված ՏՄ-ը վարելու թույլտվություն ունեցող Անձը կամ Ապահովագրված ՏՄ-ի Վարորդը ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի

իրավիճակում, որն անհնարին է դարձնում անհապաղ ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին տեղեկացնելը: Սույն կետով նախատեսված տեղեկացման պարտավորությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում, Ապահովագրիչը կամ Ապահովագրված ՏՄ-ը վարելու թույլտվություն ունեցող Անձը կամ Ապահովագրված ՏՄ-ի Վարորդը պարտավոր են անհապաղ՝ ոչ ուշ քան տեղեկացման պարտավորությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման պահից 40 րոպեի ընթացքում, տեղի ունեցած ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրողի շտրջօրյա հեռախոսահամարով,

10.2.3. անհապաղ, բայց ոչ ուշ քան ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու պահից 40 րոպեի ընթացքում, տեղեկացնել տվյալ պատահարով քննություն իրականացնելու իրավասություն ունեցող պետական մարմիններին և ապահովել ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության փաստաթղթային ձևակերպումը (բացառությամբ այն դեպքերի, երբ զանգահարելով Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրողի ծայնագրվող հեռախոսահամարին Ապահովագրիչը, կամ Ապահովագրված ՏՄ-ը վարելու թույլտվություն ունեցող անձը, կամ Ապահովագրված ՏՄ-ի Վարորդը՝ ստացել է Ապահովագրողի համաձայնությունը ապահովագրական պատահարը առանց նշված պետական իրավասու մարմիններին տեղեկացնելու կարգավորելու համար), մասնավորապես՝

- ՃՏՊ-ի դեպքում՝ ՀՀ Ճանապարհային Ոստիկանություն կամ օտարերկրյա պետության համապատասխան պատկան (իրավասու) մարմիններ, եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության տարածքը ներառում է օտարերկրյա պետության տարածք:

Ընդ որում, ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու պահին Ապահովագրված ՏՄ ղեկին գտնվող անձը պարտավոր է անցնել համապատասխան ստուգում՝ սթափության վիճակը որոշելու համար,

- Ապահովագրված ՏՄ-ի երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով վնասման, Ապահովագրված ՏՄ-ի մասերի (դետալների) առևանգման դեպքում՝ ՀՀ Ոստիկանության մոտակա բաժին կամ օտարերկրյա պետության համապատասխան պատկան (իրավասու) մարմիններ, եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության տարածքը ներառում է օտարերկրյա պետության տարածք,

- տարերային (բնական) աղետների և հրդեհի դեպքում՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն կամ օտարերկրյա պետության համապատասխան պատկան (իրավասու) մարմիններ, եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության տարածքը ներառում է օտարերկրյա պետության տարածք,

10.2.4. Ապահովագրողին ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության մասին տեղեկացնելու ժամանակ հայտնել առնվազն հետևյալ տեղեկությունները՝

- 1) Պայմանագրի/Վկայագրի համարը և կնքման ամսաթիվը,

- 2) տեղեկատվություն տրամադրելու պահին ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու հանգամանքների և պատճառի վերաբերյալ Ապահովագրիչին (Ապահովագրված ՏՄ-ի վարելու թույլտվություն ունեցող Անձին, Ապահովագրված ՏՄ-ի Վարորդին) հայտնի ամբողջ տեղեկատվությունը, մասնավորապես՝

- ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու ամսաթիվը և ժամը,

- ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության վայրը (ճշգրիտ հասցեն կամ հասցեի հնարավորինս ճշգրիտ նկարագրությունը),

- ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության մասնակիցների վերաբերյալ տվյալներ, եթե այդպիսիք առկա են (առնվազն նրանց քանակը, հեռախոսահամարները (առկայության դեպքում), պատահարի մասնակից այլ տրանսպորտային միջոցի (միջոցների) մակնիշը, հաշվառման համարանիշը, սեփականատիրոջ կամ այդ պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարող անձի անուն ազգանունը,

- ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության համառոտ նկարագիրը, վնասների բնույթը, վնասի ենթադրելի չափը (հնարավորության դեպքում),

3) Ապահովագրողի առաջարկով և համաձայնությամբ՝ պատահարը առանց պետական իրավասու մարմինների ձևակերպելու իր համաձայնությունը կամ հրաժարվելու վերաբերյալ հաստատումը,

10.2.5. հետևել Ապահովագրողի ներկայացուցչի ցուցումներին,

10.2.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով դիմել Ապահովագրված СУ-ի ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերություն, եթե տվյալ ընկերությունը չի հանդիսանում Ապահովագրողը,

10.2.7. չընդունել որևէ պատասխանատվություն, հանդես չգալ որևէ առաջարկով ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության վերաբերյալ պետական իրավասու մարմնի կողմից քննվող վարույթը դադարեցնելու միջնորդությամբ, խոստումով, կամ չկատարել որևէ վճարում՝ առանց Ապահովագրողի հետ նախնական գրավոր համաձայնության գալու և չգործել ի վնաս Ապահովագրողի շահերի, ինչպես նաև Ապահովագրողի սույն Պայմաններից բխող կամ այլ օրինական պահանջի դեպքում Ապահովագրողին տրամադրել օժանդակություն,

10.2.8. ՃՏՊ-ի դեպքում ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունից հետո 24 ժամվա ընթացքում չօգտագործել ակոհոլային խմիչք, հոգեմետ դեղեր, թմրամիջոցներ, քանի որ Ապահովագրողը կարող է պահանջել անցնել կրկնակի սթափության վիճակի գնություն,

10.2.9. Ապահովագրողի պահանջով գնության ներկայացնել Ապահովագրված СУ-ը և ԼՍ-ները՝ մինչև վերանորոգումը սկսելը:

Եթե Ապահովագրված СУ-ը ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության հետևանքով զրկվել է սեփական ընթացքով տեղափոխելու հնարավորությունից, կամ եթե Ապահովագրված СУ-ի շահագործումը ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունից ստացած վնասվածքների հետևանքով արգելված է գործող օրենսդրության համաձայն, ապա Ապահովագրված СУ-ի գնումը իրականացվում է Ապահովագրված СУ-ի կայանման վայրում,

10.2.10. ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության պահից հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել Ապահովագրողի կողմից սահմանված ձևով գրավոր դիմում՝ ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության իրեն հայտնի հանգամանքների մանրամասն նկարագրությամբ և դիմումը դիտարկելու համար Ապահովագրողին տրամադրել հետևյալ փաստաթղթերը՝

1) Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,

2) Ապահովագրողի մոտ Ապահովադրի (Շահառուի) շահերը ներկայացնելու իրավունք ընձեռող լիազորագիր(իրավաբանական անձ Ապահովադրի դեպքում),

3) դիմողի անձը հաստատող փաստաթուղթը,

4) բանկային վավերապայմանները, եթե վճարումը կատարվում է անկանխիկ փոխանցումով հաշվարկային հաշվին,

5) Ապահովագրված ՏՄ-ի գրանցման և հաշվառման փաստաթղթերը (Ապահովագրված ՏՄ-ի սեփականության վկայականը, հաշվառման վկայագիրը և այլն),

6) ՃՏՊ պահին Ապահովագրված ՏՄ-ը վարող անձի վարորդական իրավունքի վկայականը և անձը հաստատող փաստաթուղթը,

7) ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության քննությունը իրականացնելու իրավասություն ունեցող պետական մարմինների կողմից տրված փաստաթուղթ կամ փաստաթղթեր (պետական իրավասու մարմնի կողմից կազմված արձանագրություն/եզրակացություն), կամ միայն Ապահովագրողի հետ Պայմանագրում/Վկայագրում նշված ձայնագրվող հեռախոսահամարով նախապես համաձայնություն ստանալու դեպքում՝ պետական իրավասու մարմնի կողմից կազմված արձանագրություն՝ ՃՏՊ-ի մասնակիցների կողմից վարույթից հրաժարվելու մասին՝ պատահարի բոլոր մասնակիցների բացատրություններով և ՃՏՊ վայրի սխեմա, կամ պատահարի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտ(բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրողի ձայնագրվող հեռախոսահամարով Ապահովադիրը ստացել է Ապահովագրողի համաձայնությունը՝ ապահովագրական պատահարը առանց նշված պետական իրավասու մարմինների ներկայության և արձանագրության կարգավորելու համար), որոնցում ամբողջությամբ նշված են՝

- պատահարի վայրը, ամսաթիվը, ժամը, պատճառները, հանգամանքներն ու հետևանքները, նշված պետական իրավասու մարմիններին պատահարի մասին հայտնելու ամսաթիվը և ժամը, Ապահովագրված ՏՄ-ի նկարագրությունը (մակնիշը, մոդելը, հաշվառման համարանիշը), Ապահովագրված ՏՄ-ի և/կամ ԼՍ վնասների ցանկը, կամ ոչնչացված (ոչնչանալու դեպքում) մասերի ցանկը,

- պատահարի մասնակից տրանսպորտային միջոցների սեփականատերերի և պատահարի յուրաքանչյուր մասնակցի (եթե նրանք հաստատված են) ամբողջական անունները և մշտական բնակության հասցեները (գտնվելու վայրը), նրանց մեղավորության աստիճանը (եթե մեղավորությունը հաստատված է),

- իրավախախտման էությունը և գործով ընդունված վարչական տույժ կիրառելու որոշումը (վարչական իրավախախտման դեպքում), կամ օրենքի նորմերը, որոնց հիման վրա հարուցվել է քրեական գործ (եթե վնասը տերերային աղետի հետևանք չէ), այլ տեղեկություններ, որոնք համաձայն իրավունքի նորմերի պետք է նշված լինեն նմանատիպ փաստաթղթերում,

- բժշկական փորձաքննություն անցկացնելու դեպքում՝ դրա արդյունքները,

8) ՃՏՊ վայրից ընդհանուր պլանի լուսանկարներ, որոնցում առավելագույնս հնարավոր կլինի պատկերացնել վնասի բնույթը և ՃՏՊ հանգամանքները, եթե ՃՏՊ-ն ձևակերպվել է առանց Ապահովագրողի ներկայացուցչի կամ պետական իրավասու մարմինների: Ընդ որում, լուսանկարներից առնվազն մեկում պետք է երևա Ապահովագրված ՏՄ-ի հաշվառման համարանիշը և նույնականացման համարը,

9) օդերևութաբանական (սեյսմոլոգիական) ծառայության պետական հիմնարկի փաստաթղթերը, որոնք հաստատում են համապատասխան տարերային աղետի բնույթի և ժամանակի մասին տեղեկությունները, եթե Ապահովագրված ՏՄ-ը վնասվել է նման երևույթների հետևանքով,

10) եթե ապահովագրական հատուցման վճարումը իրականացվելու է այլ անձի, ֆիզիկական անձ Ապահովադրի (Շահառուի) դեպքում՝ Ապահովագրված SU-ի Ապահովադրի (Շահառուի) կողմից տրված ապահովագրական հատուցում ստանալու համար նոտարական կարգով վավերացված լիազորագիր, իրավաբանական անձ Ապահովադրի (Շահառուի) դեպքում՝ իրավաբանական անձի կնիքով վավերացված և ստորագրված լիազորագիր,

11) վնասված Ապահովագրված SU-ը Ապահովագրողին փոխանցելու դեպքում, Ապահովադիրը ներկայացնում է Ապահովագրված SU-ի հաշվառման վկայագիրը՝ SU-ի գրանցումը դադարեցնելու մասին նշումով,

12) Ապահովագրողի պահանջով՝ Ապահովագրված SU-ի խոտանման վկայականը:

10.3. Միայն Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրողի ձայնագրվող շուրջօրյա հեռախոսահամարով համաձայնություն ստանալու դեպքում, ապահովագրական պատահարը Ապահովագրողի կողմից կարող է կարգավորվել առանց պետական իրավասու մարմինների կողմից արձանագրություն կազմելու, եթե ապահովագրական պատահարի հետ կապված հարուցված չէ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ, և ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված SU պատճառված վնասի չափը Ապահովադրի գնահատականներով չի գերազանցում 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը կամ Ապահովադիրը համաձայն է Ապահովագրողին չներկայացնել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը գերազանցող պահանջ, անկախ վնասի չափից:

Սույն պայմաններով ապահովագրական հատուցումը կարող է իրականացվել միայն ապահովագրության ընթացիկ տարվա ընթացքում մեկ անգամ:

Սույն կետի գործողությունը չի տարածվում Ապահովագրված SU դետալների, մասերի և տարրերի գողության դեպքերի վրա:

10.4. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության քննությունը իրականացնելու իրավասություն ունեցող պետական մարմինների կողմից տրված եզրակացության և/կամ անկախ փորձագիտական եզրակացությունների հետ համաձայն չլինելու դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի նշանակել կրկնակի փորձաքննություն:

10.5. Ապահովագրված SU-ի առևանգման դեպքում («Առևանգում» ռիսկ) Ապահովադիրը պարտավոր է՝

10.5.1. անհապաղ, բայց ոչ ուշ քան Ապահովադրին, նրա Ներկայացուցչին, Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձին կամ Ապահովագրված SU-ի Վարորդին Ապահովագրված SU-ի առևանգման մասին հայտնի դառնալու պահից 40 րոպեի ընթացքում հայտնել Ապահովագրողին և ՀՀ Ոստիկանության մոտակա բաժին Ապահովագրված SU-ի առևանգման մասին,

10.5.2. եթե Ապահովագրված SU-ը հագեցած է որոնման և հայտնաբերման համակարգով, անհապաղ ակտիվացնել տվյալ համակարգը, եթե այն ունի նման տեխնիկական հնարավորություն կորստից հետո, և տեղեկացնել առևանգման մասին տվյալ համակարգը սպասարկող կազմակերպություն՝ պայմանագրով և/կամ տվյալ համակարգի սպասարկման և/կամ շահագործման հրահանգներով նախատեսված կարգով,

10.5.3. 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողի կողմից սահմանված ձևով Ապահովագրողին ներկայացնել գրավոր դիմում՝ Ապահովագրված SU-ի կորստի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր հանգամանքների մանրամասն շարադրմամբ,

10.5.4. ապահովագրական պատահարի դիմումի դիտարկման համար Ապահովագրողին ներկայացնել՝

1) Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,

2) Ապահովագրողի մոտ շահերը ներկայացնելու իրավունք տվող լիազորագիր (իրավաբանական անձի համար),

3) Ապահովագրված СУ-ի գրանցման և հաշվառման փաստաթղթերը (Ապահովագրված СУ-ի սեփականության վկայականը, հաշվառման վկայագիրը և այլն),

4) Օրենսդրությամբ համապատասխան պատահարը քննելու իրավասություն ունեցող պետական մարմնի (պաշտոնատար անձի) կողմից քննվող գործով վերջնական որոշում՝ այդ թվում նաև կասեցման որոշում, կամ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտ, որոնք հաստատում են Ապահովագրված СУ-ի գողության և/կամ ավազակության, և/կամ կողոպուտի, և/կամ փախցնելու մասով քրեական գործ հարուցելու փաստը, որոնցում ամբողջությամբ նշված են.

- Ապահովագրված СУ-ի առևանգման վայրը, ժամը, պատճառները, հանգամանքներն ու հետևանքները, նշված պետական իրավասու մարմիններ (պաշտոնատար անձանց) Ապահովագրված СУ-ի կորստի վերաբերյալ հայտնելու ամսաթիվը և ժամը, Ապահովագրված СУ-ի նկարագրությունը (մակնիշը, մոդելը, հաշվառման համարանիշը),

- առևանգման մասնակից անձի (անձանց), ամբողջական անուններն ու մշտական բնակության հասցեները (գտնվելու վայրը), եթե նրանք հայտնաբերվել են,

- օրենքի նորմերը, որոնց հիման վրա հարուցվել է քրեական գործ Ապահովագրված СУ-ի գողության կամ ավազակության, կամ կողոպուտի, կամ փախցնելու հատկանիշներով,

5) արտադրող գործարանի կողմից արտադրված բոլոր բանալիների հավաքածուները, հակաառևանգման, պահակային, որոնողական համակարգերի հեռակառավարման վահանակների (շղթաների, քարտերի, բանալիների) բոլոր հավաքածուները, որոնցով հագեցած է Ապահովագրված СУ-ը,

6) փաստաթղթեր (փաստաթուղթ), որոնք երաշխավորում են, որ ապահովագրական հատուցման վճարումից հետո Ապահովագրված СУ-ի հայտնաբերման դեպքում (այդ թվում Պայմանագրի/Վկայագրի գործողության ավարտից հետո) այդ հատուցումը կամ Ապահովագրված СУ-ի և դրա նկատմամբ բոլոր իրավունքները, որոնք ազատ են այլ անձի (անձանց) պահանջից, արգելքից կամ իրավունքից, կփոխանցվեն Ապահովագրողին որպես սեփականություն: Այդպիսի փաստաթղթեր կարող են լինել, մասնավորապես Ապահովագրողի և Ապահովագրի, Ապահովագրված СУ-ի սեփականտիրոջ, Շահառուի միջև կնքված համապատասխան անժամկետ պայմանագրերը (համաձայնագրերը), ինչպես նաև Ապահովագրի, Ապահովագրված СУ-ի սեփականատիրոջ, Շահառուի գրավոր պարտավորությունները,

7) դիմումը ներկայացնողի անձը հաստատող փաստաթուղթը,

8) բանկային վավերապայմանները, եթե վճարումը կատարվում է անկանխիկ փոխանցումով հաշվեհամարին,

10.5.4.1. Եթե 10.5.4. կետում նշված փաստաթղթերը և/կամ առարկաները՝

1) կցվել են քրեական գործի նյութերին, ապա ներկայացվում է այդ հանգամանքը հաստատող և դրանց անվանումը և քանակը ներառող քրեական գործին կցված փաստաթուղթ, և քրեական գործի նյութերին կցված փաստաթղթերի պատճենը՝ հաստատված պետական իրավասու մարմինների կողմից (կնիքով և ստորագրությամբ),

2) կորել են (կորել, գողացվել և այլն, այդ թվում Ապահովագրված СУ-ի հետ միասին), ապա ներկայացվում են պետական իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերը, որոնք հաստատում են նշված փաստերը:

10.6. Ապահովագրված SU-ի հայտնաբերման և Ապահովադրի կողմից ստացած ապահովագրական հատուցումը Ապահովագրողին վերադարձնելուց հետո **10.5.4.կետի 3) և 5)** ենթակետերում նշված և Ապահովագրողին փոխանցված փաստաթղթերը և պարագաները վերադարձվում են Ապահովադրին (Շահառուին) իր պահանջով:

10.7. Ապահովադրի կամ Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձի, կամ Ապահովագրված SU-ի Վարորդի կողմից սույն Պայմանների **10.1., 10.2., և 10.5.** կետերով (որանց ենթակետերով) նախատեսված պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հանդիսանում է Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման մերժման հիմք:

10.8. Պայմանագրի/Վկայագրի յուրաքանչյուր դիսկի մասով Կողմերի համաձայնությամբ կարող է նախատեսվել ապահովագրական պատահարի առաջացումն ապացուցող բոլոր փաստաթղթերի կամ մի մասի փոխարինում՝ ապահովագրական պատահարի վերաբերյալ Ակտով: Ապահովագրական պատահարի վերաբերյալ Ակտը կազմվում է Ապահովագրողի կողմից՝ պատահարի հանգամանքներն իմացող անձանց բացատրությունների հիման վրա: Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրին ազատել փաստաթղթերի նշված փաթեթից փաստաթղթերի մի մասը տրամադրելու պարտականությունից:

10.9. Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից (Շահառուից) պահանջել ներկայացնել պատահարի հանգամանքների և պատճառված վնասի չափի վերաբերյալ այլ փաստաթղթեր, որոնք Ապահովագրողին անհրաժեշտ են ներկայացված իրադարձությունը ապահովագրական ճանաչելու որոշում կայացնելու համար:

11.ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11.1. Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ապահովագրողին տրամադրելուց, վնասված Ապահովագրված SU-ի Ապահովագրողի կողմից գննելուց և գննման ակտը կազմելուց, հանգամանքների, պատճառների, հասցված վնասի չափի և բնույթի որոշումից և Ապահովագրողի կողմից իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելուց հետո: Ընդ որում, ապահովագրական պատահար ի հայտ գալու պատճառները և վնասի չափը հիմնավորող փաստաթղթերի տրամադրման պարտականությունը կրում է Ապահովադիրը (Շահառուն):

11.2. Յուրաքանչյուր ապահովագրական հատուցում վճարելուց հետո համապատասխան օբյեկտի/դիսկի ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) հատուցման ամսաթվից հինգ նախատեսված նվազեցվում է կատարված հատուցման չափով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Հետագա հատուցումները իրականացվում են Ապահովագրված SU-ի շուկայական արժեքի և մնացորդային ապահովագրական գումարի համամասնությամբ:

11.3. Ապահովագրական հատուցում ստանալուց հետո, Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովադիրը կարող է վերականգնել Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրական գումարի սկզբնական չափը՝ լրավճարելով համապատասխան չափի ապահովագրավճար Պայմանագրի/Վկայագրի չլացած օրերի համար, որից հետո իրականացվելիք հատուցումների վրա չի կիրառվի համամասնություն:

11.4. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, Ապահովագրողը կայացնում է ապահովագրական հատուցման վճարման կամ մասնակի վճարման կամ հատուցման մերժման մասին որոշում՝

11.4.1. Ապահովագրված SU-ի առևանգման դեպքում՝

- Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ապահովագրողին տրամադրելուց և առևանգված Ապահովագրված ՏՄ-ը գտնվելու պարագայում Կողմերի փոխհարաբերությունները կարգավորող լրացուցիչ համաձայնագրի ստորագրման օրվանից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում,

- Ապահովագրողի կողմից իրավասու մարմիններ հարցումներ ուղարկելու անհրաժեշտության դեպքում՝ Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ապահովագրողին տրամադրելուց և առևանգված Ապահովագրված ՏՄ-ի գտնվելու պարագայում Կողմերի փոխհարաբերությունները կարգավորող լրացուցիչ համաձայնագրի ստորագրման օրվանից հետո 60 (վաթսուն) աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին Ապահովագրողը տեղեկացնում է Ապահովադրին,

11.4.2. ապահովագրական պատահարը «Լրիվ ոչնչացում» պայմանով կարգավորելու դեպքում՝

- Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ապահովագրողին տրամադրելուց և Կողմերի փոխհարաբերությունները կարգավորող լրացուցիչ համաձայնագրի ստորագրման օրվանից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում,

- Ապահովագրողի կողմից իրավասու մարմիններ հարցումներ ուղարկելու անհրաժեշտության դեպքում՝ Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ապահովագրողին տրամադրելուց և Կողմերի փոխհարաբերությունները կարգավորող լրացուցիչ համաձայնագրի ստորագրման օրվանից հետո 60 (վաթսուն) աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին Ապահովագրողը տեղեկացնում է Ապահովադրին,

11.4.3. Բոլոր մնացած դեպքերում՝ Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ապահովագրողին տրամադրելու օրվանից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում կամ Ապահովագրողի կողմից իրավասու մարմիններ հարցումներ ուղարկելու անհրաժեշտության դեպքում Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ապահովագրողին տրամադրելու օրվանից 60 (վաթսուն) աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին Ապահովագրողը տեղեկացնում է Ապահովադրին:

11.5. Եթե իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելը և ապահովագրական հատուցման չափի որոշումը կախված է քրեական, քաղաքացիական կամ վարչական իրավախախտման գործով վարույթի արդյունքներից, ապա հատուցման դիմումի ուսումնասիրության, ապահովագրական հատուցման կամ դրա մի մասի վճարման իրականացման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև նշված վարույթի ավարտը և դատարանի վճիռն ուժի մեջ մտնելը:

11.6. Պայմանագրով/Վկայագրով կարող են նախատեսվել ապահովագրական հատուցման դիմումի ուսումնասիրության և ապահովագրական հատուցման իրականացման այլ ժամկետներ:

11.7. Իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելուն ապահովագրական հատուցում վճարելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու որոշումը ընդունվում է Ապահովադրի (Շահառուի) կողմից սույն Պայմանների 10-րդ բաժնում նշված Ապահովադրի

(Շահառուի) կողմից տրամադրվող փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև Ապահովագրողի կողմից վնասված Ապահովագրված SU-ի գննության արդյունքների հիման վրա:

11.8. Ապահովագրական հատուցման վճարումը Ապահովադրին (Շահառուին) իրականացվում է հետևյալ եղանակներից մեկով՝

- անկանխիկ եղանակով՝ փոխանցելով հաշվեհամարին,

- Ապահովագրված SU-ը Ապահովադրի (Շահառուի) կամ նրանց Ներկայացուցչի հանձնարարությամբ վերանորոգման աշխատանքներ իրականացնող տեխնիկական սպասարկման կայան ուղարկելու միջոցով՝ հետագայում վճարելով վերանորոգման աշխատանքների ծախսերը:

11.9. Ապահովագրական հատուցման վճարումը Ապահովադրի (Շահառուի) Ներկայացուցչին վճարվում է միայն վերջինիս մոտ ֆիզիկական անձ Ապահովադրի (Շահառուի) դեպքում Ապահովադրի (Շահառուի) կողմից նոտարական վավերացմամբ համապատասխան (գումարը ստանալու իրավասության վերաբերյալ նշումով) լիազորագրի առկայության դեպքում, իրավաբանական անձ Ապահովադրի (Շահառուի) դեպքում՝ իրավաբանական անձի կնիքով հաստատված և ստորագրված լիազորագրի առկայության դեպքում:

11.10. «Առևանգում» դիսկի գծով ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում, ապահովագրական հատուցման չափը որոշվում է ելնելով տվյալ դիսկի գծով սահմանված ապահովագրական գումարից՝ հաշվարկված սույն Պայմանների **5.14.** կետով որոշված կարգով:

11.11. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, վնասի չափը Ապահովագրված SU-ի վնասվելու դեպքում («Վնաս դիսկ») որոշվում է սույն Պայմանների Հավելված 1-ում սահմանված մեթոդաբանությամբ:

11.12. Ապահովագրողը հատուցում է թաքնված թերությունների և վնասների վերացման հետ կապված ծախսերը, որոնք առաջացել են ապահովագրական պատահարի արդյունքում, հայտնաբերվել են Ապահովագրված SU-ի վերանորոգման ժամանակ և հաստատվել են Ապահովագրողի կողմից գնահատման ակտով: Թաքնված վնասների և թերությունների հայտնաբերման դեպքում, Ապահովադիրը՝ մինչև դրանց վերացումը, պարտավոր է գրավոր ծանուցել այդ մասին Ապահովագրողին՝ վերջինիս կողմից լրացուցիչ գննման արձանագրություն կազմելու համար:

11.13. Հատուցման ենթակա չեն՝

11.13.1. Ապահովագրված SU-ի տեխնիկական և երաշխիքային սպասարկման ծախսերը,

11.13.2. Ծախսերը, կապված Ապահովագրված SU-ի ձևափոխման և վերասարքավորման, նրա առանձին դետալների, ագրեգատների և հանգույցների մաշվածության, տեխնիկական արատի պատճառով՝ փոխարինման և վերանորոգման, և այլ աշխատանքների հետ,

11.13.3. ապահովագրական պատահարից բացի այլ պատճառով, Ապահովագրված SU-ի սեփական ընթացքով շարժվելու անհնարինության դեպքում՝ մինչև կայանման վայր կամ վերանորոգող կազմակերպություն տեղափոխելու հետ կապված ծախսերը:

11.14. Եթե ապահովագրական պատահարի հետևանքով, Ապահովագրված SU-ն զրկվել է սեփական ընթացքով տեղափոխվելու հնարավորությունից, ապա Ապահովագրողը հատուցում է վնասված Ապահովագրված SU-ը մինչև մշտական կայանման վայր (ավտոտնակ) կամ վերանորոգման վայր տեղափոխման հետ կապված փաստաթղթորեն հաստատված տրանսպորտային(քարշակման) ծախսերը՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարով 1 (մեկ) անգամ, հետևյալ չափերով՝

1) Երևան քաղաքի սահմաններում կամ ՀՀ յուրաքանչյուր մարզի սահմաններում՝ մինչև 8000 (ութ հազար) ՀՀ դրամ,

2) ՀՀ մարզերից դեպի Երևան քաղաք կամ դեպի ՀՀ այլ մարզ տեղափոխելու դեպքում՝ մինչև 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ,

11.15. Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել Ապահովագրի վնասված Ապահովագրված ՏՄ-ի մինչև մշտական կայանման վայր (ավտոտնակ) կամ վերանորոգման վայր տեղափոխման տրանսպորտային (քարշակման) ծախսերի հատուցման այլ կարգ և քանակ:

11.16. Եթե ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված ՏՄ-ի վերականգնողական վերանորոգման արժեքը գերազանցում է սույն Պայմանների **5.14** կետով սահմանված կարգով հաշվարկված «Վնաս» ռիսկի գծով ապահովագրական գումարի 80%-ը, ապա ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է «Լրիվ ոչնչացում» պայմանով:

Պայմանագրով/Վկայագրով կարող են նախատեսվել «Լրիվ ոչնչացում» պայմանի դեպքում ապահովագրական պատահարի կարգավորման այլ չափանիշներ:

11.17. «Լրիվ ոչնչացում» պայմաններով ապահովագրական պատահարի կարգավորման համար վնասի գնահատումը կատարվում է սույն Պայմանների Հավելված 1-ում սահմանված մեթոդով:

11.18. «Լրիվ ոչնչացում» պայմաններով ապահովագրական պատահարի կարգավորման ժամանակվնասված Ապահովագրված ՏՄ-ը Ապահովագրողին փոխանցելու դեպքում Ապահովագրված ՏՄ-ն պետք է լինի մաքսազերծված: Ապահովագրված ՏՄ-ն Ապահովագրողին փոխանցելու դեպքում կազմվում է զննման ակտ՝ հավաքակազմի նշումով:

11.19. «Լրիվ ոչնչացում» պայմաններով ապահովագրական պատահարի կարգավորմանդեպքում Ապահովագրված ՏՄ-ը Ապահովագրողին փոխանցելու պայմանը որոշվում է Ապահովագրողի և Ապահովագրի (Սեփականատիրոջ) գրավոր համաձայնությամբ:

11.20. Եթե Ապահովագրված ՏՄ-ի հետ կապված պահանջը կարգավորվում է «Լրիվ ոչնչացում» պայմանների հիման վրա, բայց նշված Ապահովագրված ՏՄ-ն չի կարող օտարվել սեփականատիրոջից հոգուտ երրորդ անձանց՝ մաքսային կամ այլ մարմինների կողմից սահմանափակումների ուժով, ապա այդպիսի Ապահովագրված ՏՄ ապահովագրական պատահարի հետ կապված պահանջը չի կարող կարգավորվել Ապահովագրված ՏՄ-ն Ապահովագրողին փոխանցելու պայմանով:

11.21. Ապահովագրական հատուցման հաշվարկի ժամանակ հաշվի չի առնվում բացակայող կամ վնասված դետալների կամ ագրեգատների արժեքը, որոնց բացակայությունը կամ վնասվելը ուղիղ կապ չունի դիտարկվող Ապահովագրական պատահարի հետ:

11.22. «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով վնասի չափը որոշվում է.

- ԼՍ վնասման դեպքում՝ վերանորոգման արժեքի չափով,

- ԼՍ կորստի կամ ոչնչացման դեպքում սույն Պայմանների **5.14** կետով սահմանված կարգով հաշվարկված ապահովագրական գումարի չափով:

11.23. Կորած կամ ոչնչացված ԼՍ համար ապահովագրական հատուցման վճարումից հետո՝ Պայմանագրի/Վկայագրի գործողությունը այդ մասով դադարում է:

11.24. Առջևի շարժական պանելով ավտոմագնիտոլայի առևանգման դեպքում ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Ապահովագրի կողմից առևանգված ավտոմագնիտոլայի առջևի շարժական պանելը Ապահովագրողին փոխանցելուց հետո:

11.25. Բոլոր ռիսկերի գծով ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է ՀՀ դրամով:

11.26. Եթե վերանորոգման արժեքը հաշվի, հրահանգ-պատվերի կամ հաշվարկման մեջ նշված է արտարժույթով կամ ապահովագրական գումարը Պայմանագրում/Վկայագրում նշված է արտարժույթով, ապա Ապահովագրված ՏՄ կորստի, լրիվ ոչնչացման կամ առևանգման դեպքում ապահովագրական հատուցման չափը որոշելիս կիրառվում է ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ ապահովագրական գումարի արտարժույթի ՀՀ ԿԲ փոխարժեքը: Եթե, ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ ապահովագրական գումարի արտարժույթի ՀՀ ԿԲ փոխարժեքը բարձր է Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ ապահովագրական գումարի փոխարժեքից 20 և ավելի տոկոսով, ապա ապահովագրական հատուցման հաշվարկի ժամանակ կիրառվում է Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ապահովագրական գումարի արտարժույթի ՀՀ ԿԲ փոխարժեքը՝ ավելացված 20 տոկոսով:

Պայմանագրով/Վկայագրով կարող է սահմանվել արտարժույթի փոխարժեքի մեծության փոփոխման այլ սահմանափակում:

12. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

12.1.1. ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ստանալ ապահովագրական հատուցում ապահովագրված ռիսկի գծով՝ Պայմանագրում/Վկայագրում սահմանված ապահովագրական գումարի կամ հատուցման սահմանաչափի սահմաններում,

12.1.2. կատարել փոփոխություն Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրված ՏՄ-ը վարելու թույլտվություն ունեցող Անձանց ցանկում: Նման փոփոխությունը կատարելու համար Ապահովադիրը պարտավոր է փոփոխություն կատարելու ենթադրվող օրվանից ոչ պակաս, քան 3 օր առաջ ներկայացնել գրավոր դիմում Ապահովագրողին, որը դառնում է Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը: Այդ դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լրացուցիչ ապահովագրավճարի վճարում,

12.1.3. փոխարինել Պայմանագրում/Վկայագրում նշված Շահառուին մեկ այլ անձով՝ այդ մասին ոչ ուշ, քան 3 օր առաջ գրավոր տեղեկացնելով Ապահովագրողին: Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե նա արդեն կատարել է Պայմանագրով/Վկայագրով սահմանված որևէ պարտականություն կամ Ապահովագրողին ներկայացրել է ապահովագրական հատուցում վճարելու պահանջ,

12.1.4. Պայմանագրի/Վկայագրի կորստի, վնասման կամ ոչնչացման դեպքում՝ Ապահովագրողից պահանջել դրա կրկնօրինակը:

12.2. Ապահովադիրը պարտավոր է՝

12.2.1. Ապահովագրողի պահանջով, Պայմանագրի/Վկայագրի կնքման, վերակնքման, ապահովագրության պայմանների փոփոխության ժամանակ, ինչպես նաև Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ առկա վնասների կամ Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում ստացած վնասների վերացման դեպքում՝ Ապահովագրված ՏՄ-ն տրամադրել Ապահովագրողին զննման և/կամ լուսանկարման համար: Ապահովագրողը Պայմանագրում/Վկայագրում կամ զննման ակտում կատարում է համապատասխան նշում՝ վնասների վերացման վերաբերյալ: Վերանորոգված Ապահովագրված ՏՄ-ն կրկնակի զննման չներկայացնելու դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում այն վնասների համար, որոնք նշված են եղել վնասված Ապահովագրված ՏՄ-ի ապահովագրության Դիմումի կամ զննման ակտի (Ապահովագրված ՏՄ նկարագրության) մեջ, թվարկված են իրավասու պետական մարմինների փաստաթղթերի ցանկում, և/կամ մինչև ապահովագրական պատահարի ի հայտ գալը

Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովագրված СУ մասնակցությամբ ՃՏՊ վերաբերյալ տեղեկություններ,

12.2.2. Պայմանագրի/Վկայագրով և սույն Պայմաններով սահմանված չափերով, կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,

12.2.3. երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ապահովագրողին Ապահովագրված СУ-ը ՃՈ հաշվառումից հանելու, գրանցման փաստաթղթերի, հաշվառման համարանիշների փոփոխման մասին՝ Պայմանագրում/Վկայագրում փոփոխություններ կատարելու համար,

12.2.4. Ապահովագրված СУ-ն պահել սարքին վիճակում, ձեռնարկել նախագուշական միջոցառումներ Ապահովագրված СУ-ին, վարորդի և ուղևորների կյանքին և առողջությանը վնաս պատճառելը կանխելու նպատակով,

12.2.5. Պայմանագրի/Վկայագրի կնքումից անմիջապես հետո տեղեկացնել Շահառուին, Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրված СУ-ը վարելու թույլտվություն ունեցող Անձանց, Ապահովագրված СУ-ի Վարորդներին սույն Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի պահանջների մասին,

12.2.6. ամբողջ ծավալով կատարել ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների պահանջները: Շահառուի, Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրված СУ-ը վարելու թույլտվություն ունեցող Անձի (Անձանց), Ապահովագրված СУ-ի Վարորդ(ներ)ի կողմից Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների խախտումը գնահատվում է որպես Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների խախտում Ապահովագրի կողմից,

12.2.7. կատարել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտականությունները և Հայաստանի Ավտոապահովագրողների բյուրոյի RL 1-001 Կանոնների (ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ) պահանջները,

12.2.8. անհապաղ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին, եթե առևանգված Ապահովագրված СУ-ը գտնվել և վերադարձվել է Ապահովագրողին, կամ եթե Ապահովագրողին հայտնի է դարձել առևանգված Ապահովագրված СУ-ի գտնվելու վայրը,

12.2.9. եթե առևանգված Ապահովագրված СУ-ը գտնվել և վերադարձվել է Ապահովագրողին՝ Ապահովագրված СУ-ի գտնվելու պահից մեկ ամսվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել առևանգված Ապահովագրված СУ-ի համար ստացած ապահովագրական հատուցումը,

12.2.10. անհապաղ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին այն մասին, որ Ապահովագրված СУ-ին պատճառված վնասն ամբողջությամբ կամ մասնակի հատուցվել է ապահովագրական պատահարի մասնակից մեղավոր անձի կողմից,

12.2.11. Ապահովագրողին վերադարձնել Ապահովագրված СУ-ի համար ստացած ապահովագրական հատուցումն ամբողջ ծավալով կամ մասնակի, եթե ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված հայցային վաղեմության ժամկետների ընթացքում հայտնաբերվել են հանգամանքներ, որոնք ՀՀ գործող օրենսդրությամբ և սույն Պայմանների համաձայն ամբողջությամբ կամ մասնակիորեն զրկում են Ապահովագրողին (Շահառուին) ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից,

12.2.12. չթողնել Ապահովագրված СУ-ի հաշվառման փաստաթղթերը (Ապահովագրված СУ սեփականության վկայականը, հաշվառման վկայագիրը), Ապահովագրված СУ բանալիները և հակաառևանգման համակարգերի շղթաները Ապահովագրված СУ-ում,

12.2.13. Ապահովագրողի պահանջով հանձնել նրան Ապահովագրված СУ-ի վերանորոգման ընթացքում փոխարինված վնասված դետալներն ու հանգույցները,

12.2.14. սարքին և միացված վիճակում պահել Ապահովագրված СУ-ի որոնողական և հայտնաբերման համակարգերը: Այդ թվում անցկացնել այդ համակարգերի փորձարկում, սպասարկում, վճարել որոնողական համակարգերի օպերատորների ծառայությունները,

12.2.15. Ապահովագրված СУ-ից դուրս գալուց փակել, կողպել դրա բոլոր դռները, բեռնախցիկը և միացնել(գործի դնել) Ապահովագրված СУ-ի վրա տեղադրված բոլոր հակաառևանգման համակարգերը,

12.2.16. Ապահովագրված СУ-ը շահագործել (վարել) միայն տվյալ եղանակային և ճանապարհային պայմաններին (շահագործման ընթացիկ պայմաններին) համապատասխանող անվադողերով, այդ թվում՝ ձմռանը (դեկտեմբեր, հունվար, փետրվար ամիսներին) կամ ճանապարհաձածկույթին ձյան կամ մերկասառույցի առկայության պայմաններում Ապահովագրված СУ-ը շահագործել (վարել) բացառապես ձմեռային անվադողերով,

12.2.17. ապահովագրական պատահարից հետո, մինչև ապահովագրական պատահարի հետ կապված դիմումի կարգավորումը՝ չվերանորոգել Ապահովագրված СУ-ը, պահպանել դրա վրա առկա բոլոր վթարային հետքերը և Ապահովագրված СУ-ը ներկայացնել Ապահովագրողին հետվթարային վիճակում,

12.2.18. Ապահովագրված СУ-ի առևանգման դեպքում Ապահովագրողի հետ կնքել համաձայնություն՝ առևանգված Ապահովագրված СУ-ի գտնվելու դեպքում Ապահովագրողի և Ապահովադրի փոխհարաբերությունների վերաբերյալ,

12.2.19. ապահովագրական պատահարի «Լրիվ ոչնչացում» պայմաններով կարգավորման դեպքում Ապահովագրողի հետ կնքել համաձայնություն՝ ապահովագրական հատուցման «Լրիվ ոչնչացում» պայմաններով կարգավորման տարբերակի ընտրության և Ապահովագրողի և Ապահովադրի փոխհարաբերությունների վերաբերյալ,

12.2.20. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում ստանալու կամ ապահովագրական հատուցումը մերժելու դեպքում՝ Ապահովագրված СУ-ը վերանորոգելուց հետո ներկայացնել Ապահովագրողին զննման և լուսանկարման համար: Վերանորոգված Ապահովագրված СУ-ը Ապահովագրողին զննման չներկայացնելու դեպքում, հետագա ապահովագրական պատահարների և Ապահովագրողին հայտնաձև նախորդ ապահովագրական պատահարների արդյունքում Ապահովագրված СУ-ին պատճառված վնասները հատուցման ենթական չեն Ապահովագրողի կողմից:

12.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

12.3.1. ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև սույն Պայմաններով և Պայմանագրով/Վկայագրով սահմանված պայմանների կատարումը (հետևումը),

12.3.2. պահանջել Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխություն և/կամ ապահովագրական ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի վճարում, եթե Ապահովագրողին հայտնի է դարձել կամ եթե Ապահովագրողը տեղեկացվել է Ապահովադրի (Շահառուի) կողմից ապահովագրական ռիսկի մեծացմանը հանգեցնող հանգամանքների մասին,

12.3.3. Ապահովագրված СУ-ին պատճառված վնասի հանգամանքները, պատճառները, չափը և բնույթը պարզելու համար ուղարկել հարցումներ համապատասխան իրավասու մարմիններ և այլ ապահովագրական ընկերություններ, որոնք կարող են ունենալ անհրաժեշտ տեղեկատվություն,

12.3.4. Ապահովադրից, Շահառուից, Ապահովագրված SU-ի վարելու թույլտվություն ունեցող Անձից, Ապահովագրված SU Վարորդից պահանջել ապահովագրական պատահարի և դրա առաջացման հանգամանքների հաստատման համար անհրաժեշտ տեղեկություններ,

12.3.5. անցկացնել վնասված Ապահովագրված SU-ի գնում և ուսումնասիրություն,

12.3.6. երկարաձգելապահովագրական հատուցման վճարման դիմումի ուսումնասիրության, ապահովագրական հատուցման կամ դրա մի մասի իրականացման ժամկետը, եթե իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելը, ապահովագրական հատուցման չափի որոշումը կախված են քրեական կամ քաղաքացիական գործով վարույթի արդյունքներից, մինչև տվյալ վարույթի ավարտը և դատական վճռի ուժի մեջ մտնելը կամ մինչև Ապահովագրողի հարցումների վերաբերյալ պետական իրավասու մարմինների գրավոր պատասխանը ստանալը,

12.3.7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ Ապահովադրի, Շահառուի, Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն ունեցող Անձի կամ Ապահովագրված SU-ի Վարորդի կողմից Պայմանագրի/Վկայագրի պայմանների խախտման դեպքում,

12.3.8. մերժել Ապահովադրին ապահովագրական հատուցումը հետևյալ հանգամանքներից որևէ մեկի առկայության դեպքերում.

12.3.8.1. Ապահովադիրը (Շահառուն), Ապահովագրված SU-ի վարելու թույլտվություն ունեցող Անձը, Ապահովագրված SU-ի Վարորդը ապահովագրական պատահարի վերաբերյալ քննություն իրականացնող պետական իրավասու մարմին կամ Ապահովագրողին ներկայացրել է կեղծ՝ իրականությանը չհամապատասխանող, կամ անարժանահավատ տեղեկություններ կամ տրամադրել կեղծ փաստաթղթեր,

12.3.8.2. Ապահովադիրը (Շահառուն) վնասը պատճառող մեղավոր անձից ստացել է հատուցում պատճառված վնասի համար, կամ Ապահովադիրը (Շահառուն) ստացել է հատուցում մեղավոր անձի քաղաքացիական պատասխանատվությունը ապահովագրած ապահովագրական ընկերությունից,

12.3.8.3. Պայմանագրով/Վկայագրով և/կամ սույն Պայմաններով սահմանված պարտականությունները կամ պահանջները Ապահովադրի, Շահառուի, Ապահովագրված SU-ը վարելու լիազորություն ունեցող Անձի կամ Ապահովագրված SU-ի Վարորդի կողմից չկատարելու կամ խախտելու դեպքում,

12.3.8.4. մինչև Ապահովագրված SU-ը վերանորոգելը կամ վնասված դետալները ապամոնտաժելը՝ վնասված Ապահովագրված SU-ը Ապահովագրողին գնման չներկայացնելու դեպքում,

12.3.8.5. «Վնաս» ռիսկի գծով ապահովագրական պատահարից հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ «Առևանգում» ռիսկի գծով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադրի (Շահառուի) կողմից ապահովագրական հատուցման դիմում չներկայացնելու դեպքում,

12.3.8.6. ճանապարհին ձյան կամ սառույցի առկայության պայմաններում Ապահովագրված SU-ը ոչ ձմեռային անվադողերով շահագործելու դեպքում, որի հետևանքով առաջացել է ապահովագրական պատահարը,

12.3.8.7. ՀՀ գործող օրենսդրությամբ և սույն Պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

12.4. Ապահովագրողը պարտավոր է.

12.4.1. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Ապահովադրին ծանոթացնել սույն Պայմաններին և տրամադրել նրան սույն Պայմանների մեկ օրինակ,

12.4.2. իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելու դեպքում կատարել ապահովագրական հատուցման վճարում՝ սույն Պայմաններով նշված ժամկետներում և կարգով,

12.4.3. գրավոր տեղեկացնել Ապահովադրին (Շահառուին) իրադարձությունը ապահովագրական պատահար չճանաչելու կամ ապահովագրական հատուցման չափը նվազեցնելու վերաբերյալ որոշման ընդունման մասին՝ նշելով նման որոշման կայացման պատճառները,

12.4.4. չիրապարակել տեղեկություններ Ապահովադրի, Շահառուի, այլ անձանց մասին, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

13. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

13.1. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Շահառուն), ինչպես նաև նրանց իրավահաջորդները, պարտավոր են անհապաղ, բայց ոչ ուշ, քան ի հայտ գալուց 24 ժամվա ընթացքում, գրավոր տեղեկացնել Ապահովագրողին Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնաձև հանգամանքների փոփոխությունների մասին, որոնք մեծացնում են ապահովագրական ռիսկը:

13.2. Ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքների փոփոխություններ են համարվում Պայմանագրում/Վկայագրում/կամ գրավոր Դիմումում և/կամ նկարագրությունում համաձայնեցված հանգամանքները, այդ թվում նաև, բայց չսահմանափակվելով՝

13.2.1. Ապահովագրված SU-ի հանձնումը վարձակալության (այդ թվում կարշերինգ), վարձույթի, լիզինգի, գրավի, ինչպես նաև Ապահովագրված SU-ի վարձակալության, վարձույթի, լիզինգի, գրավի պայմանագրի կնքումը,

13.2.2. Ապահովագրված SU-ի շահագործելը առևտրային (եկամուտ ստանալու) նպատակով՝ երրորդ անձանց որպես ուղևոր կամ բեռներ տեղափոխելու համար (տաքսի ծառայություն, բեռնափոխադրող ծառայություն և այլն), ինչպես նաև, եթե Ապահովագրված SU-ի վրա տեղադրվել են տաքսի կամ բեռնափոխադրող ծառայության ցանկացած նշաններ, պիտակներ, ինքնակաշուններ (այդ թվում gg, Yandex, Utaxi և այլ ցանկացած նշաններ, պիտակներ, ինքնակաշուններ), ազդանշանային լույսեր և/կամ այլ գովազդային նյութեր, որոնք վկայում են Ապահովագրված SU-ն որպես տաքսի կամ բեռնափոխադրող շահագործելու մասին,

13.2.3. Ապահովագրված SU-ը վարելու կամ օգտագործելու տրամադրումը Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրված SU-ը վարելու թույլտվություն չունեցող անձանց,

13.2.4. Ապահովագրված SU-ի օտարումը հոգուտ այլ անձի,

13.2.5. Ապահովագրված SU-ի գրանցման փաստաթղթերի, բանալիների, հակաառևանգման ազդանշանային համակարգի հեռակառավարման վահանակի, հաշվառման համարանիշների կորուստը կամ գողությունը,

13.2.6. Ապահովագրված SU-ի օգտագործման և պահպանման բնույթի էական փոփոխությունը,

13.2.7. Ապահովագրված SU-ի վրա լրացուցիչ սարքավորման տեղադրումը, որն ազդում է Ապահովագրված SU-ի աէրոդինամիկայի կամ տեխնիկական առանձնահատկությունների վրա:

13.3. Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի պահանջել փոփոխել Պայմանագրի/Վկայագրի պայմանները կամ Ապահովադրից պահանջել վճարել ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

13.4. Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխումից կամ ապահովագրավճարի լրավճարումից Ապահովադրի հրաժարվելը հանդիսանում է Ապահովադրի

Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ դադարեցման համաձայնություն:
Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է Կողմերի համաձայնությամբ վաղաժամկետ դադարեցված այն պահից, երբ Ապահովադիրը հրաժարվում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխումից կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումից:

Եթե Ապահովադիրը (Շահառուն) չի հայտնում Ապահովագրողին Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին հայտնած էական հանգամանքների փոփոխության մասին, և եթե այդ հանգամանքները հետագայում բերում են վնասի առաջացման, ապա Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է Կողմերի համաձայնությամբ վաղաժամկետ դադարած՝ ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքներն ի հայտ գալու պահից:

14. ՍՈՒՐՐՈՎԱՑԻԱ

14.1. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադիրն (Շահառուին) պատճառված վնասից բխող նրա (կամ Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

14.2. Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն Ապահովագրողին անցնելը բացառող պայմանագրի պայմանն առաջինն է:

14.3. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (Շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

14.4. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերը և ձեռնարկել բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար:

14.5. Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

14.6. Եթե Ապահովադիրը կամ Շահառուն երրորդ անձանցից ստացել է պատճառված վնասի դիմաց հատուցում, ապա Ապահովագրողը վճարում է միայն Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների պայմաններով նախատեսված վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացած գումարի տարբերությունը:

15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

15.1. Պայմանագրի/Վկայագրի պարտավորությունների կատարման ընթացքում ծագած վեճերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Հավելված 1

Վնասի գնահատման մեթոդաբանությունը

- 1.** Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, վնասի չափը Ապահովագրված ՏՄ-ի վնասվելու դեպքում («Վնաս ռիսկ») որոշվում է հետևյալ մեթոդաբանությամբ.
 - 1.1.** Ապահովագրված ՏՄ-ին պատճառված վնասի հաշվարկում հաշվի են առնվում և հատուցման ենթակա են միայն այն դետալների, հանգույցների և ագրեգատների փոխարինման և վերանորոգման արժեքը, որոնք վնասվել են ապահովագրական պատահարի հետևանքով,
 - 1.2.** Եթե տեխնիկապես հնարավոր է (վնասված դետալի, ագրեգատի, հանգույցի վերականգնումը հնարավոր է դրանց նպատակային նշանակությունը և արտաքին տեսքը պահպանելով) և տնտեսապես հիմնավորված (վերանորոգման ծախսերը չեն գերազանցում տվյալ դետալի, ագրեգատի կամ հանգույցի շուկայական արժեքի 80 տոկոսը) ապահովագրական պատահարի արդյունքում վնասված Ապահովագրված ՏՄ-ի որևէ դետալի, ագրեգատի կամ հանգույցի վերականգնումը, ապա պատճառված վնասի չափի մեջ հաշվարկում է այդ դետալի, ագրեգատի կամ հանգույցի վերանորոգման ծախսերը,
 - 1.3.** Եթե տեխնիկապես հնարավոր չէ կամ տնտեսապես հիմնավորված չէ (վերանորոգման ծախսերը գերազանցում են տվյալ դետալի, ագրեգատի կամ հանգույցի շուկայական արժեքի 80 տոկոսը) ապահովագրական պատահարի արդյունքում վնասված Ապահովագրված ՏՄ-ի որևէ դետալ, ագրեգատ կամ հանգույց վերականգնել, ապա պատճառված վնասի հաշվարկում վնասված դետալի, ագրեգատի կամ հանգույցի ձեռքբերման արժեքը որոշվում է հետևյալ (Աղյուսակ 1 կամ Աղյուսակ 2) մեթոդաբանությամբ՝

Աղյուսակ 1

Ապահովագրված ՏՄ արտադրության մայր երկիրը	Ապահովագրված ՏՄ թողարկման տարեթվի մեծությունը (տարիքը) և վազքը	Ապահովագրված ՏՄ վնասված դետալի, ագրեգատի կամ հանգույցի ձեռքբերման արժեքի որոշման մեթոդաբանությունը
ԱՊՀ երկրներ	Մինչև երեք տարվա	վնասված և փոխարինման ենթակա

	թողարկման տարեթվի և 60.000 կիլոմետրից ոչ ավելի վազք ունեցող	հանգույցները, ագրեգատները կամ դետալները փոխարինվում են գործարանային արտադրության նոր հանգույցներով, ագրեգատներով կամ դետալներով, իսկ վնասի հաշվարկման հիմքում արտացոլվում են դրանց՝ ՀՀ շուկայում առկա նվազագույն արժեքը՝ առանց որևէ մաշվածություն մասհանելու: Ընդ որում, գործարանային են համարվում ոչ միայն Ապահովագրված SU մակնիշի պաշտոնական ներկայացուցչի ներկրած և վերջինիս կողմից վաճառվող, այլ նաև այլ ներկրողների կողմից ներկրված հանգույցները, ագրեգատները և դետալները՝ անկախ ներկրման երկրից:
ԱՊՀ երկրներից բացի այլ երկրներ	Մինչև երեք տարվա թողարկման տարեթվի և 100.000 կիլոմետրից ոչ ավելի վազք ունեցող	

Աղյուսակ 2

Ապահովագրված SU արտադրության մայր երկիրը	Ապահովագրված SU թողարկման տարեթվի մեծությունը (տարիքը) և վազքը	Ապահովագրված SU վնասված դետալի, ագրեգատի կամ հանգույցի ձեռքբերման արժեքի որոշման մեթոդաբանությունը
ԱՊՀ երկրներ	Երեքից ավել տարվա թողարկման տարեթվի կամ 60.000 կիլոմետրից ավելի վազք ունեցող	Ապահովագրված SU պատճառված վնասի գնահատման հիմքում դրվում են համանման օգտագործված կամ դրա բացակայության դեպքում ոչ գործարանային արտադրության դետալի, ագրեգատի կամ հանգույցի ձեռքբերման և տեղադրման արժեքը, իսկ Ապահովագրի (Շահառուի) կողմից Ապահովագրված SU վերանորոգման տարբերակը ընտրելու դեպքում՝ վերանորոգող կազմակերպության կողմից Ապահովագրված SU վրա տեղադրվում է համանման օգտագործված կամ դրա բացակայության դեպքում ոչ գործարանային արտադրության դետալ, հանգույց կամ ագրեգատ: Համանման օգտագործված կամ ոչ գործարանային դետալի, հանգույցի կամ ագրեգատի բացակայության և պատվիրելու միջոցով ներկրելու (այդ թվում այլ երկրից)
ԱՊՀ երկրներից բացի այլ երկրներ	Երեքից ավել տարվա թողարկման տարեթվի կամ 100.000 կիլոմետրից ավելի վազք ունեցող	

		անհնարինության դեպքում կարող է հաշվարկվել միայն գործարանային նոր դետալի՝ ՀՀ շուկայում առկա նվազագույն արժեքը՝ մասհանելով համապատասխան մաշվածությունը (համաձայն Աղյուսակ 3-ի կամ Աղյուսակ 4-ի): Ընդ որում, Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում դետալները, հանգույցները կամ ագրեգատները պատվիրելու միջոցով այլ երկրից ներկրելու համար անհրաժեշտ ժամկետի հետևանքով Ապահովագրի (Շահառուի) կողմից Ապահովագրված ՏՄ-ն չշահագործելու պատճառով բաց թողնված օգուտների համար:
--	--	---

1.4. ԱՊՀ երկրներում արտադրված Ապահովագրված ՏՄ-ին պատճառված վնասների մեծության հաշվարկում կիրառվող մաշվածության տոկոսները հաշվարկվում են համաձայն Աղյուսակ 3-ի՝ ըստ Ապահովագրված ՏՄ թողարկման տարեթվի և վազքի մեծության՝

Աղյուսակ 3

Վազք (հազ. կմ)	Ապահովագրված ՏՄ թողարկման տարեթվի մեծությունը (տարի)				
	0-3	4-10	11-14	15-19	20 և ավելի
0-60	0	6	11	13	16
60-100	5	8	12	14	20
100-150	6	9	13	15	23
150-200	9	11	13	16	25
200-300	10	12	14	17	27
300-ից ավելի	2	13	15	18	30

1.5. ԱՊՀ երկրներից բացի այլ երկրներում արտադրված Ապահովագրված ՏՄ պատճառված վնասների հաշվարկում կիրառվող մաշվածության տոկոսները հաշվարկվում են համաձայն Աղյուսակ 4-ի՝ ըստ Ապահովագրված ՏՄ թողարկման տարեթվի (տարիքի) և վազքի մեծության՝

Աղյուսակ 4

Վազք (հազ. կմ)	Ապահովագրված ՏՄ թողարկման մեծությունը (տարի)					
	0-3	4	5	6-8	9-10	11 և ավելի
0-40	0	11	14	17	21	24
40-80		14	17	20	23	27
80-100		17	21	24	26	28
100-120	17	20	22	26	28	30

120-140	18	22	24	27	29	31
140-160	20	23	26	28	30	32
160-180	22	26	27	30	31	33
180-200	24	27	29	31	32	33
200-250	25	28	30	32	33	35
250-350	32	33	36	38	38	40
350-իցավելի	40	42	44	46	46	47

1.6. «Վնաս» դիսկի գծով Ապահովագրված ՏՄ-ի վնասվելու դեպքում վնասի չափը Ապահովագրողի կողմից հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$V = ((P - M\%) + A) * L$$

որտեղ՝

V-Ապահովագրված ՏՄ-ին պատճառված վնասի մեծությունն է՝ հաշվարկված վնասի գնահատման ծախսային մեթոդով,

P-Աղյուսակ 1-ի կամ Աղյուսակ 2-ի մեթոդաբանության համաձայն որոշված փոխարինման ենթակա դետալների (հանգույցների, ագրեգատների) շուկայական արժեքն է,

M-փոխարինվող դետալի (հանգույցի, ագրեգատի) մաշվածության գործակիցը, որը կախված է Ապահովագրված ՏՄ-ի արտադրման երկրից, թողարկման տարեթվի և վազքի մեծությունից՝ համաձայն Աղյուսակ 3-ի կամ Աղյուսակ 4-ի,

A-Ապահովագրված ՏՄ-ի վերանորոգման աշխատանքների և դրա ընթացքում օգտագործվող նյութերի շուկայական արժեքն է,

L-ճշգրտող գործակից է, որի կիրառման միջոցով չնախատեսված (ոչ ակնհայտ) ծախսերը ներառվում են վնասի ընդհանուր մեծությունում:

2. «Լրիվ ոչնչացում» պայմաններով ապահովագրական պատահարի կարգավորման համար վնասի գնահատումը կատարվում է հետևյալ մեթոդաբանությամբ.

2.1. Հաշվարկվում է վնասի մեծությունը հետևյալ բանաձևով.

$$Vm = Vn - Vh ,$$

որտեղ՝

Vm՝ Ապահովագրված ՏՄ-ին պատճառված վնասի մեծությունն է՝ հաշվարկված վնասի գնահատման մնացորդային մեթոդով,

Vn՝ նախքան ապահովագրական պատահարը Ապահովագրված ՏՄ-ի շուկայական արժեքն է գնահատման ներկայացնելու օրվա դրությամբ՝ հաշվարկված սույն Պայմանների 5.14 կետով սահմանված կարգով՝,

Vh՝ Ապահովագրված ՏՄ-ի մնացորդային արժեքն է՝ գնահատման ներկայացնելու օրվա դրությամբ:

$$Vh = (1 - Ka) * Vn * \sum_{i=1}^{17} Ci$$

որտեղ՝

Ka՝գործակից է, որն արտացոլում է Ապահովագրված ՏՄ մասերի (դետալների, ագրեգատների, հանգույցների) ապամոնտաժման, փորձարկման, պահպանման և վաճառքի հետ կապված ծախսերի մեծությունը ($Ka = 0.5$),

Vn՝ Ապահովագրված ՏՄ շուկայական արժեքն է մինչև վնասվելը՝ ՀՀ դրամով,

Ci՝վնասված Ապահովագրված ՏՄ պիտանի մասերի (դետալների, ագրեգատների, հանգույցների) շուկայական արժեքի տեսակարար կշիռն է մինչև վնասվելը Ապահովագրված ՏՄ

արժեքի նկատմամբ, որոնց հստակ չափերը վնասվածության աստիճանից ելնելով ինքնուրույն որոշում է փորձագետը,

ի՝ Ապահովագրված ՏՄ մասերի (դետալ, ագրեգատ, հանգույց) տեսակները, որոնք սահմանված են Աղյուսակ 5-ով:

Աղյուսակ 5

	Հանգույցի, դետալի, ագրեգատի անվանումը	Տեսակարար կշիռ	Չննվող ՏՄ համար
1	Սրահ	18	-
1.1.	Ղեկանիվ (անվտանգության բարձիկով) և լրացուցիչ սարքերի վահանակ լրակազմ (անվտանգության բարձիկով)	8	-
1.2.	Սրահի այլ դետալներ և հանգույցներ	10	-
2	Թափքի կմախք (հատակի շեմ, կանգնակներ, տանիք, դիմապակի, հետնապակի)	13	-
3	Առջևի ձախ անվաթև, անվաթևի ցայտապաշտպան, լանժերոն, առջևի ձախ երկայնահեծան, արտաքին լուսավորության՝ առջևի ձախ սարքավորումներ	3	-
4	Առջևի աջ անվաթև, անվաթևի ցայտապաշտպան, լանժերոն, առջևի աջ երկայնահեծան, արտաքին լուսավորության՝ առջևի աջ սարքավորումներ	3	-
5	Շարժիչի ծածկոց, ջերմափոխանակիչի շրջանակ, ջերմափոխանակիչի շրջանակի կախովի տարրեր, դիմացի թափարգել	2,5	-
6	Ետևի ձախ անվաթև (կողամաս), ետևի ձախ անվակամար, լուսավորության՝ ետևի ձախ սարքավորումներ	2(2.5)*	-
7	Ետևի աջ անվաթև (կողամաս), ետևի աջ անվակամար, լուսավորության՝ ետևի աջ սարքավորումներ	2(2.5)*	-
8	Բեռնախցիկի ծածկոց (ետևի դուռ), բեռնախցիկի հատակ՝ իր երկայնահեծաններով, ետևի լայնական վահանակ՝ իր կախովի դետալներով, բեռնախցիկի պաստառներ, ետևի թափարգել	2,5	-
9	Դռներ (իրենց լրակազմ դետալներով)	4(2)*	-
10	Շարժիչ (իր կցորդիչով և կախովի սարքավորումներով)	16	-
10.1	Շարժիչ (իր կցորդիչով՝ առանց կախովի սարքավորումների)	10	-

11	Մեխանիկական (ավտոմատ) փոխանցման տուփ	7(8)	-
12	Առջևի կախոց՝ իր լրակազմ դետալներով (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնականհեծան)	10(8)**	-
13	Ղեկային կառավարման մեխանիզմ	2	-
14	Ետևի կախոց՝ իր լրակազմ դետալներով (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնականհեծան, ետևի կամրջակ)	8(10)**	-
14.1	Կախոց՝ իր լրակազմ դետալներով լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնականհեծան, ետևի կամրջակ)	18(9+9)***	-
15	Բաժանարար փոխանցման տուփ	2	-
16	Ջերմափոխանակիչներ (ջրի, յուղի, օդորակիչի և այլն), վառելիքի, ջրի բաքեր, գազերի արտանետման համակարգ	2	-
17	Սույն աղյուսակի 1-16-րդ կետերում չնշված այլ մասեր (դետալ, հանգույց, ագրեգատ)	3	-
	Ընդամենը	100	

(...)*- երկդռնանի տրանսպորտային միջոցների համար,

(...)**-ետևի քարշակ տրանսպորտային միջոցների համար,

(...)***- լիաքարշակ տրանսպորտային միջոցների համար աղյուսակում նշված 12-րդ և 14-րդ կետերի փոխարեն կիրառվում է միայն 14.1-րդ կետը, իսկ ոչ լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար կիրառվում են համապատասխանաբար 12-րդ և 14-րդ կետերը՝ 15-րդ կետը ընդունելով 0 %: